


Բ. ՉՈՒԳԱՍԶՅԱՆ

Ընթացքների  
աշխարհում



9-98

ՀՍՍՀ ԳՐԱՍԵՐՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



ԲԱՔԻՆՆ ԶՈՒԿԱՍԶՅԱՆ

# Գրասերի աշխարհում

ԺԺԺԺ

01	2282
2-98	2ուրբագյան Բ.
2եռագրերի աշ-	
խարհում:	
եր . : 1985	գ.554.

ՊՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԳՐԱՍԵՐՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ-1985



Խմբագիր՝ Լ. Վ. ՄԻՐԻՉԱՆՅԱՆ

ՄԱՏՅԱՆՆԵՐԸ ԳՏՆՈՒՄ ԵՆ ԽՐԱԲ

Երևան, 1987, օգոստոսի 14

**Չուգասզյան Բ. Լ.**  
**Ձ 820** *Չևուգրերի աշխարհում: (Ակնարկներ) / խմբ.՝*  
*Լ. Վ. Միրիչանյան. — Եր.: Սովետ. գրող, 1985. —*  
*144 էջ, թ. նկ. 4 (Պրբասերի դրան/2002 գրքա-*  
*սերների ընկ.).*

1982 թ. լույս տեսավ Մաշտոցի անվան Մատենադարանի փոխանորդ Բարկեն Չուգասզյանի «Չևուգրերի Չևաքե-րագ» գրքույթը, որակչ պատմված էր Անիբեկայի Միսաքյալ Եսանգեհերում Շեղենայի ձևազարգացման ուղիստանների մասին:

Հրատարակվող գրքույթում Բ. Չուգասզյանը շարունակում է իր գիտաանրամաշելի անհրկ-զրույցները մեր երկրի տարբեր բուսականում ու շրշաններում, ինչպես նաև Անգրիայում, Ֆրանսիայում և Գերմանական Գեմեկրտաական Հանրապետությունում իր ուղևորությունների ու զործուղումների ժամանակ տեսած և Մաշտոցյան մատենագրանների մեր մյուս Բանգրաանների համար նվիր ստացած ձևուգրերի, փաստաթղթերի, էպոսական մշակույթի այլ արժեքների և դրանց նվիրատուների նակատարքի մասին:

ԳՊԿ 76.11

Օգոստոսյան շոգ գիշեր էր: Երևանի օդանավակայանում այրտակարգ կուուզեա էր տիրում: Հարյուրավոր երևանցիներ հավաքվել էին այստեղ դիմավորելու Ֆրանսիայից ուղիղ թռ-ախշքով որպես զբոսաշրջիկներ Երևան ժամանող իրենց ազ-դականներին ու բարեկամներին: Ինքնաթիռը ուշանում էր: Բոլորի ուշադրությունը գամված էր օդանավակայանի տեղե-կատու բարձրախոսին, հավաքվածները անհամբերությամբ նայում էին ժամացույցներին: Կես գիշերին, ժամը ճիշտ 12-ին հարորդավարի հոգնած, միապազազ ձայնը հայտարարում է սպասվող ինքնաթիռի ժամանումը: Մի քանի րոպեներ ես, և միտքիս մեջ լսվում է վայրէջքադաշտից դեպի սպասարահ-ների շենքին մոտեցող օդանավի ականջ խլացնող հոնդյունը: Թույլ լույսերի տակ փայլատակում է այլումինե հական: Հա-վաքվածները հուղված են ու անհանգիստ. լճ՞ որ շատերը իրենց հարազատներին տասնյակ տարիներ լեն տեսել, կան և այն-պիսին էրը, որոնք իրենց արյունակից մեթաձվորների միջյն ան-ունեն են լսել և այսօր առաջին անգամ պիտի հանդիպեն նը-րանց: Երբ շարժասանդուղքները մոտեցան օդանավին, և բաց-վեցին դռները, դիմավորողները ուրախության աղաղակներով ու ճիշիթով, խախտելով ամեն կարգ ու կանոն, մի կողմ հրելով պահակներին, խուժեցին վայրէջքադաշտ: Օդանավակայանի աշխատակիցների հորդորները հյուրերին ճանապարհ տալու, սաստումներն ու անգամ սպանակիքները ոչ որի վրա լինի աղղում:

— Չեր մեջ Թյունիներչյան կա՞, ձեր մեջ Առաքելյան կա՞,

Մարտից Հյուսիսյան կա՞... — լավում էին հավաքվածներք կանչերը մթության մեջ:

— Քիչ համբերեմ, մանչս, ճամփու վրա մի՛ կհեար, թող սուր, որ աս մարդիկ վար իջնան: Էճէլն մի՛ րնէր, Առաքելյան ալ կա, Յլուֆենքչյան ալ կա: Ես Մարտիչն եմ, Հյուսիսյան վտահճ եմ յիկա, ստանկ մարդ ալ մեր քաղաքին մեջ չեմ դիտեր:

— Հայրի՛կ, հայրի՛կ, իսկ Արտից Պոստանյան կա՞:

— Այս անգամ արդեն ես եմ, աղմուկի մեջ ձայնս լսելի դարձնելու համար համարյա բոլորեմք: Հարց տալիս վայր իջնող ծերունազարդ դրսաշրջիկին:

— Ես չեմ ճանչար: Այս տիկինը Արտին է, անոր դիմե՛ս:

— Այո՞, այո՞, մեղի հետ Պոստանյան ունիք: Օղանափն վերին ճասին մեջ էր, մյուս գուռն պիտի իջնա: — առանց սպասելու հարցի կրկնուցում, չեքմտովորում ու պատրաստակամութեամբ պատասխանում է ծերունուն ուրեկցող տիկինը: Վաղում ենք դեպի օգնափն մյուս էլքը՝ մտավախութեամբ ունենալով մթության ու ժողովի մեջ կողքեկ մեր անձանթ բարեկամին: Պոստանյանին դիմալորելու համար ինձ հետ օղանափակայան էին կիկլ նաև Մատենադարանի բաժնի վարիչներ Ասատուր Մնացականյանը և Հակոբ Փափաջյանը:

— Պարոն Պոստանյանը ո՞վ է, պարոն Պոստանյանը ո՞վ է, — մթության մեջ կանչում ենք մենք:

— Պոստանյանը ես եմ, ես եմ, դուք Մատենադարանի՛ն եք:

Սեր ու երիտասարդ դրսաշրջիկները բռնավորված փառքիկ ճամպուկներով ու կապոցներով իրար հրելով, իջնում են սանդղաքներից, բոլորը խոսում են, ինչ-որ բաներ են ասում հայերեն ու ֆրանսիերեն, թվում է ոչ մէկը մշտաին չի խում, հուզված հնում են, ղտվար շնչում, բոլորը վայրկյան առաջ ուղում են սոր դնել ավետայց երկրի հողի վրա:

— Այո՞, ես եմ Պոստանյանը: Աս ինչ հրքանելութուն է: Իրա՞վ Հայաստանին մեջ ենք. չեմ հավատար տըրբուս: Իոպ Մատենադարանի՛ն էք: Այո՞, Ահա ասե՛ք, ասե՛ք սա ձեռագիրը, շո՞ւս, շո՞ւս, ասե՛ք, ինձի հետ ամեն վայրկյան բան

մեր կրնա պատահիլ: — և մեր հյուրը ինամբով փաթեթված կապոցը հանձնում է մեզ, միաժամանակ արագ-արագ ինչ-որ դեղեր է նետում բերանը: — Մտոնս համար է, սիրոս շատ հիվանդ է, կվախեամ չզիմանա սա երջանկությանը, — արտաստերների միջից մեզ է ուղում իր խոսքերը Պոստանյանը: Պակաս հուզված չենք և մենք՝ դիմալորողներս:

Եստում ենք ավտմեքենա և ուղեկցում պարոն Պոստանյանին մինչև «Արմենիա» հյուրանոց: Ահազին բազմութուն է խնովել մտաբի մտու: Մի կերպ կարողանում ենք մեզ գցել սպաստարահ: Այստեղ բառայանի միճակ է. կվոտրների հարգատները խանգարում են «Երևուրիտա» պաշտունյաները աշխատանքը. բարձրախորտ անընդհատ ներկաներին կող է անում հանգարավել, թույլ տալ նրկար ճանապարհ կեաթ հյուրերին զրանցելու և տեղավորելու իրենց սենյակներում: Բայց ո՞վ է լսողը: Ի վերջո հնչում է և Պոստանյան անուրը Հրաժեշտ ենք տալիս մեր հյուրին՝ հաջորդ օրը Մատենադարանում հանդիպելու պայմանավորվածութեամբ:

Ամբողջ գիշեր շկարագաց բնել, վախենում էի, որ մեր հյուրը չզիմանա հուզումներին և նրա սիրուր դավաճանի, իսկ զրա պատճառը մենք պիտի լինենք. չէ՞ որ մենք էինք նրան հայրենիք հրավիրել: Մի բանի ամիս առաջ էր, Ցրանսիայից մի խումբ հայեր էին կելլ Հայաստան, նրանց մեջ էր նաև Արտի մերձակա շքաներից Արմենիում բնակվող Հազար Ահարոնյանը: Մատենադարանում մեզ հետ ունեցած դրույքի ժամանակ նա հայտնել էր Պոստանյանի մոտ պահվող ձեռագրի մասին: Շուտով նամակագրական կապ հաստատվեց Պոստանյանի հետ: Մեր խնդրանքով ստացանք Ահարոնյանի մի քանի էջերի լուսանկարը, պարզեցինք, որ ձեռագիրը 17-րդ դարի գրություն է, իսկ բովանդակությունը՝ Ավետարանի Պոստանյանը պատրաստակամութեամբ հայտնեց ձեռագիրը նվիրել Մատենադարանին, բայց որովհետև ինք պարտ հիվանդություն ուներ և չէր կարող երկար ճանապարհորդություն կատարել, ուստի խնդրում էր հանձնարարել մեկին ու մեկին այն ստանալու իրենից: Երան խորհուրդ տրվեց

ձևաազերը ուղարկել վստահելի որևէ ճամփորդի միջոցով, փոստային ուղին միշտ չէ, որ ապահով է, կամ ավելի լավ չէ՞ր լինի, հիմն մեր հարգելի բարեկամը անձամբ ձևաազեր բերն Երևան, Հայրենիքի սերը, գրել էինք նրան, թող ուժ ու կորով, վստահություն պարզեի և առանց մտավարկության թուշ նա գա հայրենիք: Այս տողերը գրվել էին առանց խորապես հիտանկցելու առաջարկության վստահավոր հետևանքները: Քայլերը մեր նամակին հարցրից Պոստայանի հեռագիրը՝ օգոստոսի 14-ին իրեն դիմավորել Երևանի օդանավակայանում, նոր միայն անըրազարմանք մեր ժանխոհեմությունը»: Մինչև Պոստայանը Երևան չեկավ ու բարեհաջող Վերադարձվա՞վ էին, մենք չհանդատացանք, բայց երբ մեկ տարի հետո մարտիկայի Միացյալ Նահանգներից նրանից նամակ ստացանք, համոզվեցինք, որ հայրենիքի սերը հիվանդ մարդուն կարող է այնպես բուժել, որ նա ոչ միայն հեռավոր ճանապարհորդություններ կատարելու հնարավորություն կստանա, այլև կարող է ապրել մինչև խոր ծերություն:

1967, օգոստոսի 19, Մաշտոցյան Մատենադարանի նիստերի զահիճը լի է քաղաքամայր Երևանի մտավորականության ներկայացուցիչներով և հայ ձևաազրական մշակույթի երկրպագուներով: Մատենադարանի գիտական խորհրդի նիստում է արտասահմանից հայրենադարձված 10 ձևաազիր մատայանների հանձնման հանդիսավոր արարողությունն է տեղի ունենում: Նրախին ներկա են այդ օրերին Իրանից ներգաղթած Թևան Հովսեփյանն ու Գրիգոր Քնիշչյանը, որոնք հայրենիք են բերել թե՛ իրենց զերդաստաններին պատկանող և թե՛ մի քանի այլ նվիրատուների 9 ձևաազիր մատայաններ, 10-րդ ձևաազիրը Հովհաննես Պոստայանինն է: Ներկա է նաև ինքը՝ Նըվիրատուն:

Մատենադարանի տնօրեն, Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, պրոֆ. Լևոն Խաչիկյանը բացում է նրա և բարձր գնահատական է տալիս մեր սփյուռքահայ եղբայրների հայրենասիրության այս գեղեցիկ արտահայտությանը: Անչափանոն նվիրաբերված ձևաազրերի գիտական արժեքի և ձևաազրերի հայրենադարձման երևույթի մեծ

խորհրդի մասին իրենց խոսքն են ասում ծերունազարդ հայագետ, պրոֆ. Երվանդ Տեր-Մինասյանը, Մատենադարանի ձևաազրերի գիտական պահպանության բաժնի վարիչ, պրոֆ. Ասատուր Մեսցակյանը: Պատասխան խոսքով հանդես են գալիս նվիրատուները:

Հուլիսը էր Հովհաննես Պոստայանի իլույթը 1915 թ. հայրենի Անթեզ քաղաքի տեղահան է արվում նաև Պոստայանների ընտանիքը, բայց երանց անմիջապես եղծին ճամփա չեն հանում. հայր Պոստայանը հացագործ էր, իսկ չարադարաներին հաց էր պիտը. նրանց մեջ լավ հացթխույններ էին: Պոստայաններին պահում են Ուրֆայում: Պատանի Հովհաննեսը անային ծառա է վերցրվում տեղի իշխանավորներից մեկի մոտ, որի տան անկյուններով մեկում Հովհաննեսը մի օր տեսնում է հայերեն գրքեր՝ արժաթապատ կազմերով ու խաշերով: Պարզ է թալանված են հայազկան եկեղեցիներից, դարձրեցին իր ու տներին: Այդ օրերին Պոստայանի մայրը ծանր հիվանդանում է: Բուրբը համոզված են, որ սիրելի մայրիկը պիտի մահանա: Ոչ մի կը չկա: Հայրը աղոթում է, և տենցիներին բույրին առաջարկում է աղոթել, թերևս ամենաբարձրայլ օրին: Պատանի Հովհաննեսը և բուրբը հեծվալում են ու աղոթում: Մի՞թե իրենց ամենակարող հայրիկը այդքան անզոր է: Հովհաննեսի մոտ հանկարծ մի մխր է փայլատակում. հիշում է, որ իրենց քաղաքում ծանր հիվանդների զլխի տակ բահահանակը սուրը գրքեր էին դնում, և շատ շատերը ապաքինվում էին: Նա անմիջապես վազում է աղայի մոտ և խնդրում այդ գրքերից մեկը՝ հիվանդ մոր զլխի տակ դնելու համար: Անհավատ աղան մի պահ վարանում է, բայց չի մերժում իր ծառային, որի քաղցր երբը հաճախ էր նրա դառնացած հոգին սփոփել: Իսկ վերջերս նա հաճախ էր այդպիսի վիճակի մեջ բնիկում: Պատանի էին, որ նրա փախցրած գեղեցիկուհի հայուհին, լպզովելու համար, կարիվ էր ննջանալու: Աղան չէր կարողանում հասկանալ հայուհու արարքը. ի՞նչ էր արել նրան, ուրիշները կոտորում, չարացում էին, իսկ ինքը փրկել էր նրա կյանքը. հիմար գեղեցիկուհի, լավությունն անդամ չհասկացավ: Աղան մոտենում է գրքերի կույտին, վերցնում է գր-

բանցից մեկը, պոկում արծաթյա կազմը, խալը և ամբարտա-  
վանորեն, իբր մեծ լավություն, մեկնում է գիրքը Հովհաննե-  
սին: Սուրբ գիրքը ևս անզոր է լինում փրկելու մտքը: Այնու-  
հետև գալիս են ավելի դատան օրեր, Ուրֆայի հայերը ապս-  
տամբում են Մկրտիչ Յոթնեղբայրյանի դիմադրությունը: Հակառակորդի ուժերը գերակշռող էին, սակայն հայերի կամքն  
էլ անկասկած չէր, նրանք կովչեցին մինչև վերջին փամփուշտը:  
Ինքը Պոստանյանը շատ կռիվ է հիշում, թե ինչպես օրհասա-  
կան պահին հայ կանայք, արյունարբու ասկյաների ձեռքը  
լրկնեկու համար, իրենց նետում էին ջրհորները, կախում  
այուներից, պատշգամբներից:

Որոշ ժամանակ հետո Պոստանյաններին էլ են քշում  
Տեք-Ջորի անապատներ: Հովհաննեք ահավոր սպանդից  
փրկվում է հրաշքով: Նա քաղաքից քաղաք, գյուղից գյուղ է  
շրջում, աշուղություն անելով մի կտոր հաց է մտրում: Այնու-  
հետև Սիրիս, Կրանահա, Կրանահա: Հիսունմեկ եր-  
կար տարիներ որպես մասունք մեծ սիրով ու գուրգուրանքով  
նա պահել է այն մատյանը, որի հուշը կապված է եղել իր  
գերդաստանի ու ժողովրդի ողբերգություն հետ: Իսկ այսօր,  
այսօր ինքը լափազանց երջանիկ է, ցնծում է և իստ իր ժողո-  
վրդի այպանով ու ժողկույն կյանքի, և նա կարող է իր հա-  
մար մասունք դարձած գրչագիրը նվիրել հայրենի Մատենա-  
դարանին:

Պոստանյանի ձեռագրերը, որ 17-րդ դարի գրչություն էր,  
ու միայն արժեքավոր էր իր մանրանկարներով, հիշատակա-  
րանով, այլև իր պատմությունը, մատյանի վրա գտնվող կնի-  
քից ու թվահամարից, ստաշին անգամ լինելով, տեղեկանում  
էր, որ եղեմիայի (Ուրֆայի) թաղական խորհրդի մատենա-  
դարանում եղել են շուրջ հարյուր հայերեն գրչագրեր, որոնցից,  
ավագ, շատ աննշան օրինակներ են փրկվել:

Այս ուրախառիթ հանդիպումից մի քանի օր հետո Ամե-  
նայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի միջոցով Մատենագա-  
րանը ստացավ եղևիպի թաղական խորհրդի կնիքը կրող մի  
երկրորդ մատյան էս, այս անգամ արդեն մենտերակ Կ. Փա-  
փազանից: Այս երկու ձեռագրերը՝ որպես նդեօխայի երկեմեհի

հարուստ գրադարանի խոսուն հիշատակներ, բարեհաջող դու-  
զագիպությունը կանգնեցին իրար մոտ և հերթականորեն ստա-  
ցան Մաշտոցյան Մատենագարանի 10336 և 10337 թվահա-  
մարները:

Պոստանյանի նվիրաբերած ձեռագրի ընդօրինակողը Վար-  
դան Բալուեցի գրիչն է եղել: Ուրախայի է արձանագրել, որ  
այսօր, երբ հարյուրամյա բաժանումից հետո, Մատենագարա-  
նի գրապահոցի գարակների վրա իրար մոտ են եկել երեք  
գրչագիր մատյանների՝ գրված նույն ինքն Վարդան Բալուեցու  
գրչով: Խղճողաշունական է փաստը. հայրենի երկրում նորա-  
բըր գտնում է եղորբը, մայրը՝ որդուն, դավակը՝ ծնողին, նույն  
գրչատեղից, նույն գրչի տակից գուրս եկած ձեռագրերը՝ իրար:

#### ԿՍԱԿԸ Ի ԿՍՏՆՐ Է ԱՄԳՈՒՄ 45 ՏԱՐԻ ԼՆՏՈ

Երևան, 1969, մայիս

Փարիզարնակ Ռաֆայել Մարկոսյանը 1922 թվականին,  
մահվանից քիչ առաջ, 36 միավորից բաղկացած իր հին գրչա-  
նագրի հավաքածուն կտակած է եղել Հայաստանին, բայց հաս-  
գույցյալի կամքը 45 երկար տարիներ մնացել էր անիրագոր-  
ծելի: Հավանաբար այս կտակը մոռացության կենթարկվի,  
եթև մի առիթով Մաշտոցյան Մատենագարանի տնօրինու-  
թյունը լրկնեներ դրա հետքի վրա:

1966 թ. վերջերին Մատենագարանի գիտական աշխատա-  
կից Արտաշես Մաթևոսյանը, երբ ուսումնասիրում էր հայերեն  
ամենախոշոր ձեռագրի՝ Մշո Ճաղընտրի գրչության հանգա-  
մանքները, գեմ հանգիման էր եկել Փարիզի Նուպարյան մա-  
տենագարանում պահվող 1201 թ. Դարանադաջց գավառի Ա-  
վագ վանքում Մուսիֆանոս գրչի կողմից ընդօրինակված մի ձե-  
ռագիր մատյանի, որի մասին հակիրճ տեղեկություններ էին  
սպրդել գրականության մեջ: Մշո Ճաղընտրի և Նուպարյան  
մատենագարանի սովյալ ձեռագրի աննշանությունները պարզե-

չու համար Մաթևոսյանին անհրաժեշտ էր ունենալ 1201 թ. այդ ձևագրի գեթ մի քանի էջերի լուսանկարները:

Մատենադարանի տնօրինությունը այս կապակցությամբ անհապաղ դիմեց Նուպարյան մատենադարանի այն ժամանակվա տնօրեն պրն. Արմենակ Սալմասյանին: Պատմախանը շուշացավ. 1967 թ. հունվարի 24 թվակեր իր նամակով հարգելի մատենադարանագետը հայտնում էր, որ Մաշտոցյան Մատենադարանը շուտով կստանա ոչ թե պահանջված մատյանի լուսանկարները, այլ ձևագրեր, ավելի՛ք նաև այն բոլոր 36 ձևագրերը, որոնք մեզայնիկ Մարկոսյանը կտակել էր Հայաստանին՝ առանց նշելու նվեր ստացող հաստատությունը: Ա. Սալմասյանը հայտնում էր նաև, որ այդ հավաքածուն իբրև ավանդ, ժամանակավոր կերպով, տարիների առաջ ի պահ է տրվել Նուպարյան մատենադարանին, ուստի ինքը բանակցություններ է վարել կտակակատար պրն. Վահան էսմերյանի հետ այդ ձևագրերը նվիրելու Հայաստանի մատենադարանին, որտեղ և դրանք կլինեն «իրենց բնական տեղում», միայն, ավելացնում էր Սալմասյանը, «քիչ մը» համբերություն է պետք, և ժաման ինչ պետի կարգադրվու: Նամակի վերջում միաժամանակ խնդրվում էր ուղիներ նշել ձևագրերը սպահով հայրենիք առաքելու համար:

Մարկոսյան հավաքածուն Երևան փոխադրելու բանակցությունները փոքր-ինչ ձգողվեցին: Գործի ընթացքը արագացնելու համար օգնություն կանչվեց նաև Ֆրանսուհայ մշակութային միության նախագահ պրն. Ադաֆ Գարբիլյանը և նամակներ գրվեցին կտակակատար պրն. Վահան էսմերյանին:

Իր հերթական նամակներից մեկում Սալմասյանը օրացուցել տեղեկացրեց, որ Մարկոսյան հավաքածուից 14 մատյան ցուցադրման նպատակով պայմանագրով հանձնված է Փարիզի հայկական թանգարանին, ուստի առաջին հերթին պետի կարգադրվի 22 մատյանների առաքումը, իսկ 1967 թ. մարտին լրանա պայմանագրի ժամկետը, դրանք ևս կուղարկվեն: Տարին արդեն լրանում էր, բայց ձևագրերի առաքման մասին լուր չկար: 1968 թ. հունվարի 24-ին, բանակցություններ սկսվելուց ճիշտ և ճիշտ մեկ տարի հետո, Երևան հասան

Մարկոսյան հավաքածուի 22 ձևագրերը: Մատենադարանում ցնծությամբ էր, վերջին տարիներին հայրենի ձևագրերի այսպիսի խոշոր ու արժեքավոր հավաքածո չէր ստացվել: Մատենադարանի տնօրինությունը անմիջապես շնորհակալագրեր ուղարկեց Արմենակ Սալմասյանին, Վահան էսմերյանին ու Ադաֆ Գարբիլյանին՝ նրանց պարգևատրելով նորևս ստեղծված «Մեծարյա Մաշտոց» հուշամեդալով՝ ի նշան շնորհակալության հայ ձևագրական մշակույթին մատուցած անզնահատելի ծառայությունների:

Փարիզի հայկական թանգարանին պահ տրված Մարկոսյան հավաքածուի մնացյալ 14 մատյանները ստացվեցին նույն տարվա օգոստոսի 3-ին:

Այս բոլոր մատյանները Մատենադարանի գրադահուցում դասավորվեցին հասուն պահպանում, որը ստացավ «Մեզայնիկ Մարկոսյան հավաքածո» վերնառությունը:

Սկսվեցին ստացված ձևագրերի պիտակայն մանրամասն նկարագրությունն ու ուսումնասիրությունը: Հավաքածուի պատմությունը ունենալու համար ձևոր տակ շկային Ռաֆայել Մարկոսյանի վերաբերյալ տվյալներ, նվիրատվության հանդամանքների մասին տեղեկություններ: Սալմասյանը ինքը ունի շրիտեր, իսկ կտակակատար Վահան էսմերյանին ուղարկված նամակները անպատասխան էին մնում:

\* \* \*

«Մարկոսյան հավաքածուի» գրադարերից յուրաքանչյուրը մեր ժողովրդի ու երկրի, նրա հարուստ մշակույթի խոտուն վկան է. այստեղ կան է՝ Ավետարան ու Մաշտոց և՛ Տոնացույց ու Մանրուսունք, և՛ այլ բովանդակությամբ մատյաններ, այստեղ դուք կհանդիպեք Անանիա Շիրակացու ինքնակենսագրությանն ու թվարանական խնդիրների գրքերին, Գրիգոր Նարեկացու և Ներսես Շնորհալու բանաստեղծություններին, Մխիթար Հերացու աշխատություններից կատարված բաղվածքներին, Մխիթար Երզնկացու թվարանական խնդիրներին, կրժանթանաք մեր համեստ գրիչների ու ժողովուրդների, վարպետ արժաթագործների նորանոր անունները:

Չևագրերն ընդօրինակված են հայ մշակույթի երբեմնի շեն կենարտենք Սրզնկայում ու Խարբերում, Ջեյթունում ու Եվդոկիայում (Քոթոսթ), Շոտթում ու Կաֆայում: Ըստ ժամանակի դրանք զբված են 12—19-րդ դարերում: Հնագույնը թվագրված է 1160 թ., իսկ Խորազույնը՝ 1822 թ.: 36 ձևագրերից 14-ը մագաղաթյա են, իսկ 22-ը՝ թղթյա: Գրանցից 11-ը արժանիքի զրկված կազմեր ունեն: Մագաղաթյա ձևագրերից 2-ը կրկնագիր է (պալմուսյեստ—կրկնակի օջտագործված մագաղաթ, երբ հին բնագիրը բերված է և նորն է զրկված):

Չևագրերից շատերը ունեն արձեքավոր մանրանկարներ, (նկ. 1) որոնց ուսումնասիրությունը մի նոր էջ կավելացնի հայկական գրքային գեղանկարչության պատմության մեջ: Մեր առջև է 1201 թվականին Երզնկայի Ավագ վանքում Մտեհանես պրի ընդօրինակած Ավուարանը, որի խորաններն ու անվանաթերթերը արտակարգ հետաքրքրություն են ներկայացնում թե՛ զարդանկարների պարզությունը և թե՛ գունների հստակությամբ (նկ. 2): Ուշադրության արժանի է ձևագրի սկզբում ամբողջ էջով մեկ տրված խաչը իր պատվանդանով և հիմքի երկու կողմերում տեղադրված հավերժության խորհրդանշաններով. այստեղ ակնհայտ է մեր կոթողային քանդակագործության անմիջական ազդեցությունը և՛ ոճական, և՛ կատարողական առումով:

Միանգամայն այլ պատկեր է գծագրվում, երբ դիտում ենք շատ ավելի ուշ, 1661 թվականին, Եվդոկիայում Մկրտիչ Զահանկալի ընդօրինակված ու ծաղկած մատյանը. նա, հեռավելով հանգերձ իր նախորդների ավանդներին, հեռանում է նրանցից՝ միանգամայն ինքնուրույն հորինվածքային լուծումների տալով տերունական նկարներին և յուրովի մեկնաբանելով դրություններն ու կերպարների հոգեբանությունը: Այս իսկ տեսակետից բնորոշ են նրա «Մուտքը Երուսաղեմ» և «Խորհրդագլուխը ընթրիք» պատկերները:

Մանրանկարներով հարուստ 1675 թ. ծաղկած «Շարակ-նոցը» ուշադրություն է գրավում թե՛ զմանկարի վարպետությամբ ու յուրահատուկ հորինվածքներով և թե՛ գունաշարի արտակարգ մեղմությունը:

Համելի անպակնայ էր, երբ ձևագրերը ըննելիս Մատենադարանի դիրեկտոր, պրոֆ. Լ. Խաչիկյանը դիտեց, որ 1591 թ. վարագա վանքում ընդօրինակված Ավուարանի պատկերները պատկանում են անվանի մանրանկարիչ Հակոբ Քուրաչեցուն (16—17-րդ դդ.):

Պետք է մասնավորապես նշել, որ Մարկոսյան հավաքածոյի ձևագրերը, սակայն բացառությամբ, գտնվում են շատ լավ վիճակում, ունեն կազմի և արծաթի կազմեր: Արծաթապատ զրվածված նրբագեղ կազմերից մի քանիսը ունեն արձեքագրություններ և հիմնականում պատրաստված են 17—18-րդ դարերում Եվդոկիայում. մի հանգամանք, որ վկայում է հայ արծաթագործության երբեմնի ծաղկուն օջախի գոյության մասին:

Սլազգրավ է, որ 1636 թվականին Կոստանդնուպոլսում ընդօրինակված արծաթապատ կազմը զրվածված է ոչ թե տերունական թեմաներով, ինչպես ընդունված է եղել, այլ մեր պատմության կարևորագույն իրադարձությունների պատկերներով. կազմի վերևի փեղկի վրա Գրիգոր Լուսավորիչը մկրտում է Տրդատ թագավորին և Աշխեն տիկնոջը, իսկ ներքևի փեղկի վրա պատկերված են հայոց զորքի անմահ ստեղծողներ Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը:

Հավաքածոյի երեք արծաթյա կազմեր արձնապատված են: Մատենադարանում սակավաթիվ են նման կազմերը. ստացված այս նոր միավորները նշանակալիորեն համարում են մեր հավաքածուները:

Կազմերի մասին խոսելիս պետք է հիշատակել այս մատյանների մագաղաթյա պահպանակների հնագրական որոշակի կարևորությունը. դրանց հետությամբ հավանորեն պետք է տանել ավելի վաղ ժամանակներ, թեքես մինչև 7—9-րդ դարեր: Այս պահպանակները բնեկիտ դիտվեց, որ դրանցից մեկում Խ և Վ տառերի գրությունները որոշակիորեն շեղվում են մեսրոպյան երկաթագրի հայտնի ձևերից. առաջին դեպքում լուսալի փոքր-ինչ երկարացումով դեպի ներքև Խ-ն մոտենում է ժամանակակից արամյան և տառին, առանց վերի ոլորանի,



իսկ երկրորդ դեպքում՝ Էլուտի երկարացումով զեպի վեր-  
վն մտնենում է ժամանակակից զ ատանակին՝ առանց վերի  
ժածկի:

Քննադրերի հիշատակարաններն ու հիշատակագրություն-  
ները մեզ տալիս են նրանց ստեղծման ժամանակ Հայաստանի  
զեղրակ պայմանների, ժողովրդի ծանր առօրյայի և, ի վերջո,  
հենց ձեռագրերի հետաքրքիր պատմությունը: Այս առումով  
արժեքավոր են մասնավորապես 1591 թվականին Վարազա-  
վանքում ընդօրինակված Ալեւտարանի հիշատակարանը, գրիչ  
Քարսեղ Վարազեցին մանրամասն նկարագրում է դարավեր-  
ջի Քուրբ-պարսկական պատերազմների հետևանքով Հայաս-  
տանում տիրող ծանր վիճակը. «Իսկ ի վերջին դարուս և ի նը-  
սեմ ժամանակս մեր եղև բաղութին և պատուհաս ի վերայ  
աշխարհիս հայոց,— այսպես է սկսում իր հիշատակարանը  
գրիչը՝ նկարագրելով օսմանցիների արշավանքները զեպի  
էրզրում ու Քավրիջ,— ...Եւ զօրքն խոնգբարին, որ ի շտ  
դարձան յուղձ շարիս գործեցին, բազում զեղ և դաւառ ան-  
բնակ արարին, կար ի չիբրեանց հարկատուացն գերի վա-  
րեցին և յլստամբոլ հասուցին: Եւ դարձաւ յայնում ամի զօրք  
կաղնեցին անթիւ, և շեալ գեացին յօգնականութիւն նեղը-  
լոցն որ ի Դավրէժ, և էր զուրս զօրացն ոմն Յահրատ փաշա,  
և էր անզ կոխ սաստիկ, և մեր ոչ կարեմք պատմել զաղէս և  
զկսիթ, զողբում և զլալում, զարժանութիւն, զօղձ և զգերու-  
թիւն, և զսասանութիւն, և զայլ ազգի պատուհաս որ եկն ի վն-  
բայ մեր վասն ծովացեալ մեղաց միտոց Երեւնայ աշխարհն,  
բաղաքն և երկիրն, և ամենան շուրջակալ դաւառին, ի յա-  
նօրն աղբացն պարսից և բաստակարանաց զօրացն. սրբայնիչ  
եղև ամենայն աշխարհն բրիստոնէիցն: Եվ այս բոլորից հետո  
ավելացնում է. «Զվերջ և զկատարածն ոչ գիտեմք...»: 1656  
թվականին վերը հիշված Մկրտիչ Զահանկար իր ընդօրին-  
ակած Հայսմավորքի հիշատակարանում շարժազան ժլատ  
խոսքերով արձանագրել է օտար նվաճողների դեմ ժողովրդի  
մղած պայքարը. «Դրեցայ սա ի դառն և ի դիժար ժամանա-  
կիս, յորում հարարացիքն բազմացեալ են և ազգի ազգի  
տանջանօք կու շարչարեն զմեզ: Որ անցեալ ամին Սէլյոի

Ահմատ փաշան զնացեալ է Դոնէան՝ որ Քազաւորն իւրն վի-  
ճակ էր ստեալ՝ զոր քաղաքացիքն ոչ ընկալան. Գ օր կուռե-  
ցուս և բազում արինհնդութիւն եղև: Յետոյ գնաց ի Հայպալ,  
Եւ անզ ևս ոչ Քողին. մտան ի քաղաքն, զփանձիչ եղան  
միինչ Բ ամիր: Եւ անզ բազում և անթիւ շարիս գործեաց,  
զոր ոչ կարեմ գրով արկանել: Յետոյ եկաւ ի Քուխաթ ԲՅՈՒ  
(200.000) զոտչ ստաւ և սպա գնաց: Եւ այսպիսի նեղութիւնս  
կու կրեմք ի յանօրինաց...»:

1491 թվականին ընդօրինակված Ավետարանի հետագա  
հիշատակագրություններից տեղեկանում ենք, որ ձեռագիրը  
ինչ-որ ժամանակ գտնվելիս է եղել օտար ձեռքում և 10  
ֆլորինով (ոսկեդրամ) էտ է գնվել. «Այս սուրբ Աւետարանիս  
համբաւ ելաւ Արզրումու քաղաքն: Եւ ևս տեր Մկրտիչս եկալ  
գնացի ի Կլվար: Առի զՄկիչն ու գնացի Ա[ր]զ[ր]ումու քա-  
ղաք և գնացար ի ոսկերիս: Միքան (ոսկերչի ևս դիմել, որով-  
հետև ձեռագիրը արձանագրու է եղել. այժմ միայն գամերի  
հետքերն են մնացել): Առաք և զնացար ի խոճալ Մթանդար...  
Առին և գին դրին Ժ ֆլոր. ի անօրինաց ձեռաց առին: Արդ և  
ևս հայալ հնչիցս գնեցի և բերի իշխատակ ինձ և իմ ծնողաց  
խմբց...»:

Եվզոդիկայում 1636 թվականից առաջ գրված այն ժողո-  
վածուի մեջ, որտեղ կան Շիրակացու երկերը, ընդօրինակված  
են նաև Միխիլան Երզնկացու (14-րդ դար) 15 թվարանական  
խնդիրները և անանուն մի հեղինակի 7 այլ խնդիրներ: Վեր-  
ջիններս, որոնք հավանաբար միինչ այժմ շն հրապարակված,  
անուշտ, կարող են հետաքրքրական լինել. այս խնդիրներից  
մի երկուսը ընդհանրություն ունեն Զաքարիա Սարկավա-  
զին (17-րդ դար) վերագրվող խնդիրների հետ:

Ձեռագրերի հետ Մատենադարանը Փարիզից ստացել էր  
նաև դրանց ցուցակը. 23 մատյան 1910 թվականին նկարա-  
գրել է Կ. Սերբուր Ապտուլչան, իսկ մնացյալ մեղ անհայտ մի  
այլ անձնավորություն: Յուցակում եղած նշումներից տեղեկա-  
նում ենք, որ Ռ. Մարկոսյանը 17 ձեռագիր գնել է Ինճիբյան  
եղբայրներից և 2-ը Նիկողոս Պրիմո անունով մեկից: Վերջի-  
կից գնված 1651 թվականին կաթայում ընդօրինակված մատ-

յանի մասին նկարագրող Հետևյալ ծանոթությունն է ավել-  
անիկողոս Պրինս Կովկասու Չանակչի և Կեղեցիցի զնած. քե-  
րած է Ի Բարիզ և ծախած է Մարկոսեանիս: Պրինսից 1890  
թվականին Մարկոսյանի զնած մշտու ձևազրի մասին, որը  
1676 թվականից ստաց ընդօրինակել է գրչի Հեռագետ Հոսմ-  
կյալցիցին և «Մարգարտաշար, սովեզօձակ թղչնազրերով գե-  
ղչցիկ» Աղզմու է եղել, նկարագրող գրել է. «Ինձ թուի, որ  
սոն մարգարտաշար Մաղմոսին գրիչն է գրողն Վիեննայի  
Միխիլանսեզ ձևազրատան թիվ 433 Մաղմոսին ևս, վասն  
զի նոն ժամանակներու ևն երկուրին ալ թուականը: Գիրն  
նոյն է և Մաղմոսարանի մեծութիւնն ալ նոյնպէս: Մերիննին  
մէջ տնտեր կալ գրողին, բայց տարին չկալ, անոնցին մէջ  
տարին կալ, բայց գրչին, տեղադն և տիրոջ անունները բեր-  
ցած ևն»: Քն մնացալ ձևազրերը Մարկոսյանը որտեղից է  
է ձևը բերել՝ առայժմ մեղ հայտնի չէ: Հավաքածոյի ձևազրերի  
նախկին հասցեները ճշտելու համար, անկասկած, օգտակար  
կլինեն այն հիշատակագրությունները, որոնք հղում ևն մեղ  
զեպի Եվզոսիայի հայկական եկեղեցիները. պետք է ննթազ-  
րել, որ այստեղ եղել ևն հայկական ձևազրերի հարուստ հա-  
վաքածոներ, որոնց բեկորները այսօր վերագրանում ևն հայ-  
րենիք:

\*\*\*

1968 թ. հոկտեմբերին Երևան ժամանեց Մարկոսյանի  
կտակակաւար Վահան էամերյանը, բարձրահասակ, իր տարի-  
քից ավելի երիտասարդ երևացող մի անձնավորություն. նա  
Նազնված էր արտակարգ վայելուչ ու ճարտակով, ծպտում էր ի-  
րեն ճանաչելով ողորնող Մատենադարանի աշխատակիցներին,  
արված հարցերին շատ հակիրճ պատասխաններ էր տալիս,  
երբեմն էլ խոսում էր Փարիզի գործերից, ինչ-որ տասնյակ  
տարիներ առաջ, իրեն հայտնի, անտարականներն ու հասա-  
րակական գործիչներին մասին, հիշում էր Մարկոսյանին ու  
նրա գործընկերներին, իրեն թվում էր, որ մենք ևս ճանաչում  
էինք նրանց, իսկ մենք բողոքավարությունից զրոյված լուծմ  
էինք, զգում էինք, որ ձերնուպակ հիշողությունը զավանհա-

նում է, խոսափում էինք շատ հարցերից՝ հիշելով Սալմաս-  
յանի նախազրույցացումը, որ էամերյանը փուլ բաներից կա-  
րող է վրզովվել:

Մատենադարանը կազմակերպեց նրա շրջագայությունը  
Հայաստանում, ընայած եղանակները ցրտել էին ու աննպատ-  
էին Հեռավոր վայրեր զնար համար:

էամերյանը հաճախ էր դալիս Մատենադարան և իջնում  
էր գրապահոց, նայում էր գրադարանների վրա շարված հա-  
գարավոր հատորներին, որտե՞ն ծպտում էր, ինչ-որ բաներ էր  
ստամ քթի տակ, մի օր էլ զուլթը թափ տվեց ու ասաց.

— Սո, աւ մեր նախնիները որքան աչք ևն բացուցած  
այս գիրքերը գրելու համար: Եթէ աստեք շրվային, մեր ազգն  
ալ հայ լպիի մնար: Աս գրիչները, թե որ ֆալախս կերած  
ըլլային, ասակի գեղեցիկ մարգարտաշար լպիտի կընձային  
գրել: Թաֆալի Մարկոսյանը կպատմեր, որ Պապա Համբար-  
ձումին՝ թով սրովելիս ֆալախայի շատ ևն բաշած, թե դիւ-  
նար՝ ինքն ալ գրոց-բրոց կդառնար:

Ճալախկալի պատմությունից էլ կարծեք էամերյանի լե-  
զուն սկսեց բացվել:

Մարկոսյանի ձևազրերի հավաքածոյի վերը հիշված հ.  
Աերոն Ապտուլայի կազմած ցուցակը ստուգելիս մեր ուշա-  
դրությունը գրավել էր մի «Աղմոսարան», որի ծանոթագրու-  
թյան մէջ ասված էր, որ այդ մատյանը 1912 թվականին նվեր  
է սրվել Դենի Քոչնե անունով մեկին: Ծպովելով էամերյանի  
ներկայությունից, Հեռաբրդեկցիքը Քոչնեի մասին:

— Քոչնեը ուրիշ՝ գիտնա: Բարկիւսն եղած է Ակազն-  
միային և Յրանսային փառլամենին անզամ էր: Հայ դատը  
միշտ պաշտպանած է:

Եւ նրան պատմեցիք Քոչնեին նվիրված ձևազրի մասին,  
Հեռաբրդեկիլով միւսժամանակ, թե արդոք կարելի է դանել  
նրա ժառանգներին և իմանալ ներկայումս որտեղ է աչք  
մատյանը:

— Դուրիս է,— շատ հանգիստ պատասխանեց էամեր-  
յանը:— Թողը՝ Դենի Քոչնե կտտերը լավ կը ճանչնամ, ան

\*Չգիտի չգիտե՞լ նոր հայկական ձևազրութեան անգղոց Պոպա Համ-  
բարձումի (Վոսնեճան Համբարձումի) հետ:



ալ լամ բարեկամն է, Փարիզի մոնիսիփալին մեջ կը պաշտօնավարէ: Դռն լամ նամակ մը գրն իրեն, ես կերթամ քովը: Քեզի անմիջապէս թել մը կը բաշենմ:

Երբ մի քանի որ հետո գնացի Վահան էսմերյանին ճանապարհ գնելու, նկատեցի, որ նրա եկրոպական ճամբորդի կողքին մի գյուղական տոպրակ էր դրված: Ճարտրիկակ էր: Հիշեցի Պերճ Պոռչյանի մասին Երբմանգաղի պատճառը, թի կնայեա նա Փարիզ էր ժամանել թեի տակ մի մեծ բողւա: Չիկի հիճա էլ ողջ կայանք Փարիզում բնակված արեւելցին գյուղական տոպրակից ձեռք իր բաշելը: Կարծես կոստանով իմ մտքերը, էսմերյանը ասաց.

— Կը գարմանա՞ս. ոչխարի բուրդ է, վրային ալ շիշին մեջ ընկուղի անուշ դրած են: Պարտի ատեն մայրս բուրդն անկողին կըխնէր: Այս բուրդը հին-հին հուշեր կարթնին հոգիս մեջ, մայրիկիս հոտը կանոնէ անկէ: Փարիզ պիտի անկողին շինել տամ: Իսկ այդ անուշը, զոր զուր մուրաբա կըբեք, շատ կախորժեմ: — Այս խոսքերը արձան զգացված արջան մեղմ ու անմիջական ավելցին, որ նրան ճամփու գնորդները չկարողացան որեւէ բան ակնայացնել:

Երբ էսմերյանը վերադարձել Փարիզ, ես անմիջապէս հետագրեցի իր բարեհաջող տեղ հասնելու մասին: Բայց զարմանալին այն էր, որ ես միաժամանակ խնդրում էր հաջորդ տարվա մայիս ամսվա ճամար տեղ պատվիրել հյուրանոցում, որովհետև նորից պիտի գա Հայաստան:

էսմերյանի հետագրին հաջորդեց բարի լուրի նրա նամակը, գնացել է Դենի Քոչնէ կրտսերի մոտ, մանրամասն պատմել է նորհրդային Հայաստանի հաջողութիւններին, թանգարաններին, մասնավորապէս Մատենադարանի մասին և թեկազորն է նրան իր մոտ գտնվող հայերին գրչակիր նվիրել Հայաստանին, որպէսզի ամբողջանա Մարիտյան հավաքածուն, իսկ պրն. Քոչնէր չի մեծով, որովհետև դրանով շիր մեծ հոր փափագին գոհացում տված կլլաւ:

1969 թ. հունվարի 15-ին Փարիզից ստացված հետագիրը հայտնում էր, որ Երևանի 2750-ամյակի առթիվ հրավիրված հանդիսավոր հավաքի ժամանակ Դենի Քոչնէր իրենց գերդաստանում պահվող «Սաղմոսարանը» պաշտոնապէս հանձ-

նել է այդ օրերին Փարիզում հյուրընկալվող Երևանի Քաղաքային խորհրդի նախագահի տեղակալ ընկ. Արամ Արամյանին:

Դենի Քոչնէ կրտսերի նվիրած գրչակիրը 322 թերթից բաղկացած փոքրագիր (8,5×6 սմ)՝ թղթյա Սաղմոսարան է, ընդօրինակված 1636 թվականին: Արտակարգ արժեքավոր և արծաթյա դրվագված կազմը, որ 1704 թվականին Կեսարիայում պատրաստել են արծաթագործ Մալխասը և Մահանի Կարապետը: Կազմի կողի վրա պահպանված արձանաչառութիւն մեջ ասվում է, օՍաղմոսարանն այս Մուրաբ որդի Տէր Արուստամին, զոր ինքն բառացաւ և զարդարեց արծաթա [ի] Կեսարիա բաղարին, ձեռամբ արծաթագործ Մալխասին, Մ. Կարապետին, թիին ՌՃԾԳ (1153+551=1704), (նկ. 3):

1969 թ. մայիս ամսին Վահան էսմերյանը նորից Երևանում էր: Պայծառ ու զեղեցիկ գարուն էր բացվել մեր մայրաքաղաքում: էսմերյանը ցանկութիւն հայտնեց մի քանի տեսարժան մայրերում լինել, հանդիպել Մարտիրոս Սարգսանին, նրա հետ ծանոթացել էր 20-ական թվականներին Փարիզում: Երկու վաղեմի բարեկամներ խոսում էին հին օրերի մասին, Սարյանը մի քանի անուններ տվեց, էսմերյանը պատասխանեց, որ նրանք վաղուց մահացած են: Սարյանը տրամեց.

— Արեւմտ մեքը երկու ծերունիներս ենք մեացել այս մեծ աշխարհում:

— Ոչ, անոնցմե ոմանք կապրին. Արշակ Չոպանյան, էակար Շահին: Դռն ալ հալեմք պիտի ըլլաւ, իսկ մենք ասով մահկանացունք ենք,— գրեցաւ ու վստահ իր խոսքերին, առանց զուլն ինչ հանձնախոսութեան, առարկեց էսմերյանը:

— Իմ գալելիին մեջ կտավներ ունիմ էսկար Շահինէն, Զարար Զարարյաննէ, Ըովոսի Փոչմաննն, դժբախտաբար, ձեզմէ չունիմ: Ուսիայլ Մարիտյանը էտկարին հետ միշտ կը սակարկէր, իսկ ես կուտայի ինչ ուղեր: Ատոնք պիտի Հայաստան բերնմ: Կտով մ'ալ Գոյայնն կըրնանք ձեռք գցել: Ինչ մը սուղ է, բայց հող չէ:

Մեկ ալլ օր ժամադրվել էինք Անան գնալ: Որոշույլ ժամին Մատենադարանի աշխատակից Սամսոն Լալաֆարյանի հետ գնացինք «Արմենիա» հյուրանոց, որտեղ իշխանի էր էսմերյանը:

լանք, սակայն առավել բան մեկ ժամ նրան փնտրելուց հետո, օտարաված վերադարձանք: Երեկոյան, երբ հանդիպեցինք նրան, բարի ժպիտով ասաց.

— Դուրս նա հոֆեյիին առնէ, բոյի քիչ մը օդ անձնւմ, տեսա հրապարակին վրա մանչեր կը քայլեն, թմբուկ կը զարնեն, ֆանֆառ կը հնչեցունեն, բոյի ժամանակ դեռ ունիմ, ժողովուրդս կարմիր փողկապ ունեցող աղջնակներուն, անուշ-անուշ հայերեն կը խոսեն, հոգիս թունդ էլալ: Երբնն պիտի պամ Հայաստան, նրանի աջին շուտ եկած ըլլալի է՝ խորհեցա Սևանի ջուրերը լպփաի փախին, իոյ սա ասոանհանգեար ինծի համար նորն լպփաի կրիննու ներող կըլլար:

Հաջորդ օրը գնացինք Սևան, եղանակը բավական ցուրտ էր, քայլ էամերչանք իրեն լալ էր դգում, հանգիստ, առանց դժվարութեան, բարձրացալով դիտեց վայրերը, մի քանի ժամ վառնց: Ոյնն չէր խոսում, նայում էր հեռուները, ծովը մնկմ էր, սակայն երկինքը ամպամած էր, քիչ հետո երկինքը մի քանի վայրկեան պարզվեց.

— Նայ՛, նայ՛, ծովը ինչպիսի գոյնեքը կը փոխի:

Սիկ մտավայտութիւն շունենայի, որ ծերունիին կարող է մրսել, նրա հետ ժամերով կկանգնի Աստուղ և նրա կարոտած աչքերով երկար-երկար կնայի ի սպանին: Առաջարկում եմ գնալ Եկոթամարս ճաշարան: Զի մերժում: Ըշարի սեղանի շուրջ մեկ-մեկ հացքեր եմ տալիս Մարկոյանի մասին. ի վերջո մի բան պիտի իմանա՞նք մի կը նվիրատուի մասին, անցյալ գալստյան ևս ոչինչ չպատմեց: Առաջարկեցի մի բաժակ հայկական գինիով հարգել Մարկոյանի հիշատակը: Զատակնց: Բաժակը վերցրեց մի կում խմեց, ներողութիւն խնդրեց, որ չի կարող վերջացնել. բո՛ղջկները թույլ չեն տալիս: Հետո դարձավ ինձ, հարցրեց, թե արդար մոտս թուղթ ու գրելու ունեմ, ևս հանեցի իմ փորձիկ տետրը:

— Գո՛ր, — ասաց էամերչանք, — Ռաֆայելը ծնած է 1844-ին, մահացած է 1922: Իր գերեզմանը Փնո լաշեզին մեջ է, 96-րդ թաժամունդը: Գերեզմանին շինելուն ժամանակ հոն ներկա էի: Մանուկ աստեր Պալաթ եկեղեցիին քով երկու տնայակ կար և Պապա Համբարձում այրենեզմանն մինչև Սաղ-մաս, նարեկ, դաս կուտար: Օր մը Ռաֆայելին անանկ ֆուա-

խա մը կը բաշէ, որ տղան ոտքերը արշուճով տուն կը բերեն հետննելու ծնողքին: Տղան կուտ և մորը՝ Ծուլիկ հանձնի կր-տի. Սո ալ դպրոց չեմ երթար, որիչ ինչ կուղեք՝ կընձնի:

Ռաֆայելի հայրը, Հակոբ արտան, պատմում էր էամերչանք, կիսով չափ զործից բաշված դերձակ էր, մայրը որ-գուն խորհուրդ է առալիս աշխարհ ընդդմովն իրենց դրացի սպամանդագործ խոպալիս վարպետի մոտ: Ռաֆայելը մեկ տարի սովորում է քարերի անուններն ու առանձնահատկու-թիւնները, սովորում է դրանց հեռախորդներին ցույց տալու կերպը: Երեք տարի ծառայելուց հետո փոխադրվում է Պոլսի չարշին՝ շուկա, այստեղից էլ Փարիզ:

— Զլումբլոթ՞՝ կանաչ, յարթ՞՞ կարմիր, սաֆիթ՞՞ մազի՞, — պատմում էր էամերչանք, — սա խոտքերը առաջին հերթին պիտի սորվեր ամեն մի սպամանդագործը: Քարերը ինք խառնացին կը տաշեր, իսկ կտորին փակցունելը Ռաֆայելին կիյնար: Երբ Պոլսեն մենք եկանք Փարիզ, Ռաֆայելը արգեն իր գործը ուներ: Այդ անունները ինձի ալ սորվեցուց: Այլ քար չէր տաշեր, ոչ ալ կը հզկեր, եղբայրս Պողոս էամերչանք, որ իր քով աշխատանքի սկսած էր, իր վրա առած էր աղ գործը, և ինք գիտեր, որ իրմէ աղեն կը տաշեր: Ակնահատի գործը գլուրին չէ, ձեռքը թեթև պիտի ըլլա տաշողին, մանավանդ զլումբլոթին համար: — էամերչանք այսպես ընկալով հուշերի գիրկը և սկսեց պատմել այս ու այն սպամանդագործի, իր քնտանիքի անդամների, փարիզյան իր մի քանի արկածների մասին և մոտացավ Ռաֆայել Մարկոյանին:

Մի քանի օր հետո Զվարթնոցի ավերակները դիտելուց հետո նորից պայժառացալով էամերչանի միտքը: Մերենայով տուն էինք վերադառնում:

— Տնարկից քո՞վդ է, գրե՞, — ուրախ դիմեց ինձ: — Մարկոյանք մեծնեկեն առաջ կտակակատար հանձնախումբ նշանակած էր՝ կղբայրս Պողոս էամերչան, գանձապահ, որին կատարչալ կը վստահեր, իր նոտարը, պրն. Պերճ, երբորդ պրն. Գուլիե, շորորգը ես՝ Վահան էամերչան: Հիմակ երեքը

\*Զլումբլոթ՝ կանաչ, հակիթ՞՞ կարմիր, սաֆիթո՞՞ կապույտ:

մեռած են, ևս միևեզ մնացի և այդ գործը կը շարունակեն: Մազազաթները Մարիտայանին ուզածին պես Հայաստանի մայրաքաղաքը կը դանդիկն: Եթե անոր 4 միլիոն բափթթալը կամ անոր մեկ մասը ձեզի կը հետաքրքրե, ևս պատրաստ եմ զայն ուղիւս Քափիթթալը պահ արված է Հայ Բարեգործականին քով:— Այնուհետև նորից ամեն ինչ խառնվեց, շահակացա այդ կապիտալը Եվլեյաբաղան բանկից ինչպես փոխադրվեց Ամերիկա, հետո Պողոս Նուպար Փաշային հիշեց, որ Վահան Մալեդյանին հանձնարարում է դրազվել Մարիտայանի թողած հարստութեամբ, իսկ Մալեդյանը, որ բնակվում էր Կիցցայում, միայն տարին մեկ անգամ էր դալիս Փարիզ, անարդյունք ժողով էր անում ու վերադառնում:

Փարիզ վերադառնալու նախօրին էամերլյանը նորից կարգադրեց իմ ծոցատետրը հանել:

— Գրե՛, Եղբորս զավակը, Ռափայիկ էամերլյան, այժմ Նյու-Յորք կը բնակի, իր անունը ի հիշատակ Ռափայիկ Մարիտայանի դրած են, բանի մը հեռութուններ ունի, հատ մ'աչ Քորոս Ռոսլին, թե որ Նյու-Յորք երթաս, գնա իրեն քով, գրե՛ հասցեն:— էամերլյանը, ի զարմանս իմ, շատ մաքուր անզվեթով թելադրեց հասցեն և շարունակեց:— շքես, որ իր հասցեն ևս տված եմ, կրնա նեղանալ, թիշ մը հայտնությունն հեռացած է, անունն ալ կրճատած է, շինած է Ռաֆ, իր ամերիկացիները երկաթ անուններ չեն սիրեր: Անոց խեղճ ալ անիծեմ, չեն սիրեր՝ թող շարեն, ինչո՞ւ հայ անունդ կը մտունաս Ալ հանգիստ պիտի Փարիզ վերադառնամ: Քափիթթային խնդրով մտտ առնենն պիտի զբաղիմ:

Երկու տարի հետո, երբ Նյու-Յորքում էի, զանգահարեցի Ռաֆ էամերլյանին, հետաքրքրվեցի ձեռագրով, պատասխանեց, որ ինքը Ռոսլին չի ունեցել, իր մտտ անզվածը 17-րդ դարի մատյան է եղել և այն էլ ուղարկել է Փարիզ, որտեղ, պրոֆ. Սիլարֆի Տեր-Նիսրիսյանի քննութունից հետո, հանձնված է վաճառքի մի աճուրդային բնկերութեանն: Ես ուշացել էի:

Մայիսի 19-ին պարոն Վահան էամերլյանին ճանապարհ-հեցինք Փարիզ, նա ինչպես միշտ, ևս կուտայումը հազած, գլխարկը ձեռքին, ուրախ ու ժպտուն մեկ առ մեկ հրաժեշտ

տվեց ճանապարհ դնողներին և շարժեց զեպի օդանավը, ասելով:

— Նորեն պիտի գամ:

Երկու օր հետո Փարիզից սահմակեցուցիլ հեռագիր ստացվեց. Վահան էամերլյանը օգանազակայանից տուն զնալու ճանապարհին մահացել էր մեքսիկայի մեջ: Ծիշտ է, նա իննսուներե մտտ մարդ էր, բայց այդպիսի ուրախ օրերից հետո նման ցավայի լուր չէինք սպասում: Կուցե նա զգացել էր իր վախճանը, որ այդքան կարճ ժամանակում երկու անգամ էկավ հայրենի երկիրը տեսնելու և կամ զուցե հողի կանչ էր նրան բերել հայրենիք: Մ'ով դիտես: Բայց որ նա տարիներ առաջ իրեն վատահամ ճայ մշակույթի նշխարները իրենց իսկական տիրոջը հանձնած ու զոհ զնայ աշխարհից, դա էլ ծերունազարդ Վահան էամերլյանի երջանկությունն էր:

## ՀՈՂՍՈՒՎ ՍԵՐԱՍԱՅՅՈՒ ԻՆՔՆԵՂԻՄ ԱՄՏՅԱՆԸ

Բնովն. 1973, նոյեմբերի 26

Արևելյան հնագիտության պրոֆեսոր, դոկտ. Բուրխարդ Բրենտչուեր երբ 1969 թվականին առաջին անգամ եղավ Հայաստանում, այնպես հրապարակեց մեր երկրով ու մշակութթով, որ անմիջապես որոշեց իր առաջիկա աշխատությունը նվիրել Հայաստանին:

Հավատարմեք:— ասում էր հարգելի պրոֆեսորը Մատենադարանի ձեռագրերին ծանոթանալուց հետո, — ևս և կինս՝ ֆրաու Հելզան, շատ երկրներում ենք եղել, շատ թանգարաններ ենք այցելել, բայց այսպիսի արտակարգ ու ինքնատիպ մանրանկարչական հուշարձաններ հազվագիպ ենք տեսել: Ծիշտ է, մենք նախքան Հայաստան գալը ձեր երկրի մասին տեղեկություններ ունեինք, բայց այն ինչ որ տեսանք, վեր է մեր անկեպտություններից:

Պրոֆ. Բրենտչուեր նախախաձայնական և իսլամական շրջանի պատմության ու արվեստների վերաբերյալ բազմաթիվ գրքերի հեղինակ էր, իսկ կինը՝ լեզվաբան արարազեան, հետևաբար և նրանց զնահատականը ստեղծուցիկ տպավորու-

Քյան արդյունք կամ բազմաբազմությունից դրդված ասված խոսք չէր:

Հետագա տարիներին նրանք մի քանի անգամ ևս այցելեցին Հայաստան՝ բերելով նաև իրենց երկու զուտորբրին՝ Սոնյային, որ արևելյան մաթեմատիկայի պատմության ապիրանտ էր, և Դալմարին: Բրենտլերը սերտ կապեր ստեղծեց Մատենադարանի և Պատմության Բանգարանի աշխատակիցների հետ, անձամբ եղավ մեր հանրապետության տարբեր քրչաններում, նկարահանեց հայկական ճարտարապետության շատ կոթողներ, ուսումնասիրեց մեր ծեսերն ու սովորությունները: Այս բոլորի արդյունքը եղավ այն, որ 1973 թ. նա հրատարակի վրա դեց «Drei Jahrtausende Armenien» («Հայաստանի 3000 տարին») խորագրով եռու ձեռագրված ու պատկերազարդ իր աշխատությունը: Գիրքը շատ լավ ընդունելություն գտավ ոչ միայն Գերմանական Գեոմոխրատական Հանրապետության մեջ, այլև նրա սահմաններից դուրս, և երկրորդ հրատարակություն արժանացավ ավստրիացի հետաքրքրասեր քննիչըղի համար:

Հայտնի է, որ առաջին աշխարհամարտից հետո Հայաստանի և հայերի նկատմամբ եվրոպական արևելագիտության հետաքրքրությունները նվազեցին 19-րդ դարի հանուն մատուցամբ: Նահանջեցին, եթե շատնք ընդհատվեցին, նաև գերմանական դասական հայագիտության ավանդները, համարյա մոռացության տրվեցին իրենց իսկ մեծանուն հայագետներ Հյուբշմանի, Վինդիշմանի, Մարկվարտի ու Կարտեի և այլոց աշխատությունները: Սովետական Հայաստանի աննախադեպ վերելքը, գիտության ու մշակույթի բուռն զարգացումը նոր խնդիրներ և նոր հարցեր թելադրեցին արևմտաեվրոպական արևելագիտությանը, և 60-ական թվականներին հետո հայագիտությունը այդ երկրներում նոր փուլի մեջ մտավ: Հաճելի էր, որ պրոֆ. Բրենտլայի գիրքը և անձամբ ինքը խթան հանդիսացան արևելագիտմանական պատմաբանների ու արվեստաբանների նոր սերնդի հայացքը ուղղելու դեպի հինավուրց Արարատյան արտաբնու, նրանց հիշեցնելու գերմանական հայագիտության կրթման փառքի մասին:

1973 թ. նոյեմբեր ամսի վերջերին մի խումբ ասվառա-

կան արևելագիտների հետ հրավիրվել էի մասնակցելու Հայկ բազաբի Մարտին կուտերի անվան Համալսարանում կայանակերպված «Հունանդիմը և մարդու կերպարը անտիկ և արևելյան մշակույթների մեջ» թեմայով կոնֆերանսին:

Ես Բեռլին ժամանեցի կոնֆերանսի բացումից երկու օր առաջ և, օգտվելով ազատ ժամանակից, առաջին օրը՝ նոյեմբերի 26-ին, այցելեցի Բեռլինի ազգային (նախկին արքայական) գրադարան, որի հետ Մատենադարանը գրափոխանական կապի մեջ էր և որտեղ հայերեն ձեռագրեր էին պահվում: Գերմանիայի հայերեն գրադարը զենուս 19-րդ դարի վերջերից իրենց վրա են գրավել հայագետների ուղադրությունը: Բեռլինի ձեռագրերը մանրամասն նկարագրել և հրատարակել է Ն. Բարսամյանցը 1886 և 1888 թվականներին, նախ հայերեն, ապա գերմաներեն, ցուցակագրված է ընդամենը 99 մատյան, փոքր-ինչ ավելի ուշ՝ 1907 թ., Ֆ. Ն. Ֆինկը և է. Գյանջեցյանը հրատարակում են Տյուպինգենի համալսարանի գրադարանի ձեռագրացուցակը, որտեղ նրանք նկարագրում են 109 մատյան: Գերմանական այլևայլ գրադարաններում առկա և նոր ստացված 38 հայերեն ձեռագրեր նկարագրել և առանձին գրքով հրատարակել են Հ. Ասֆադյն ու Հ. Մոլիտորը 1962 թ.:

Բեռլինի ազգային գրադարանի հայկական թանկարժեք հուշարձաններից է 16-րդ դարի րանաստղծ Հովաստի Սևբաստացու ինքնագիր մատյանը, որը ժամանակին գրավել է հայ և օտար անվանի շատ հայագետների ուղադրությունը: Իրականահիշատակ Գարեգին Հովսեփյանը այդ մատյանից 1918 թ. հրատարակել է 18 րանաստղծություն:

Բեռլինի ազգային գրադարանի աշխատակցուհին մեր խնդրանքով բերում է այդ գոյություն գրչագիրը և մենք դեմ հանդիման հաղորդվում ենք հայոց 16-րդ դարին, ողորկ, հաստ թղթի վրա շղչափում ենք սերաստացի րանաստղծի մատնահետքերը:

Որքան ենք մենք կարոտ մեր անցյալի մեծերի ինքնագրերին: Ժամանակը դաժան է եղել մեր նկատմամբ. այդպիսի ինքնագրեր շատ սակավ են: Իսկ մեզ, հին ժառանգության գիտական հրատարակությունները պատրաստողներին,

որքան են դրանք պետք: Մեր Մասնեկագրանի վաղամեռիկ աշխատակից Վախթանգ Գեորգյանը անշափ ոգևորված էր, որ այն մատչանի լուսանկարների հիման վրա տպագրության է պատրաստում Հովասափի բանաստեղծությունները, Ոգևորված աշխատեց, բայց չունեավ իր երջանիկ տքնության արդյունքը. վաստակաշատ ձեռագրագետ Ասատուր Մնացականյանը սիրով ավարտեց իր կրտսեր զորքերիկերոջ աշխատանքը, որ լույս տեսավ 1964-ին: Շոշափում եմ Հովասափի ինքնագիր մատյանը և ի բարին հիշում սիրելի Վախթանգին:

## ՀԱՆՆ ԺՊՏՈՒՄ Է ՄԵՁ

Հախ. 1973, Եղեմբեր 27

Հաջորդ օրը Հայտնում ենք: Ինչ լավ է, որ պահպանվել է հին բազարը: Քվում է, գտնվում ևս Գրիմ եղբայրների հեքիաթների աշխարհում, զոթական ոճի զոզորիկ հուշարձաններ, սրածայր զմբեխներով շենքեր, սալահատակված եկղիկ ու սյուրապուլուտ փողոցներ, խնամքով պահվող փոքրիկ հրապարակներ:

Այսօր ևս կոնֆերանսի հետ կապված ծրագիր չունենք, ուտի պրոֆ. Բրենտյուք ծրագրել է ինձ ցույց տալ Հայկի արևելագիտական և բաղաբաշխի զրազարաններում պահվող հայերեն կրքեր զըշարհորը: Իջամական արվեստների նրա ասպիրանտ Կարին Ռուհանյանը, որ իմ թարգմանչուհին էր, և Բրենտյուքի դուստրը՝ Սոնյան, ինձ առաջնորդում են արևելագիտական զրազարան: Այստեղ երկու ձեռագիր կան, որոնք նկարագրված էին Անֆուլի և Մուխոտի ցուցակում, և ևս առանձնապես նոր բան չէի ակնկալում: Թերևս ավելի լավ կլիներ որևէ թանգարան այցելել կամ ճարտարապետական հուշարձան դիտել: Բրենտյուք իր գերմաներեն ունդ ստուգանությամբ անդերեն ինչ-որ բաներ է առում: Մի կերպ հասկանում եմ, վստահեցնում է, որ դա ևս կլինի:

Գրադարանավարուհին, ի զարմանս Բրենտյուքի, չէլյում է մի հայերեն մատյան, որ ոչ որի կողմից մինչ այդ չէր

նկարագրված: 16 կամ 17-րդ դարի Սաղմոսարան էր: Լավ է, շատ լավ. աշխարհում առկա հայերեն ձեռագրերի թիվը մեկ միավորով ևս ավելացավ:

Հետո զրազարանավարուհին սեղանին է դնում մի ստվար մատյան, մի շատ հին Ավետարան: Բրենտյուքը նայում է իր ձեռքում գտնվող ձեռագրացուցակը և շտապում է հայտնել, որ այն ընդօրինակված է հայոց ՈՉԶ թվականին՝ 673+551=1224, պահպանված է անգամ Սարգիս զըշի հիշատակաբանը: Հարգելի պրոֆեսորը գերմաներեն ինչ-որ բաներ է առում, որ Կարինը թարգմանում է մերթ անդերենով և մերթ էլ տեսերենով:

— Այս զրազարանի հայտնին երկու ձեռագրերը 1865 թ. նվթր է ստացված Հյուպատոս Օ. Բլաունից, իսկ նա զրանք ձեռք է բերել Պարսկաստանում շրջադաշնիս:

Երբ սկսեցի թերթել մատյանը, առաջին իսկ խորաններից նկատեցի զրանց կատարման արտակարգ ինքնատիպ տեք. Պահպանվել էին 7 խորաններ, մի բանիսը վնասված, կաշին է ծաղկազորի, երբեմն ամբողջ էջի երկայնքով գլխատուեր և 3 մանրանկար՝ «Չորս ավետարանիչներ», «Միլրտություն», «Ետրհրապար ընթերթ», որոնց զմանկաները պարզ էին, զունաչարք մեղմ ու հանգիստ, կերպարները ընդհանրացված:

Շատ հետաքրքիր է, կարծես թե նման ոճի մանրանկարներ տեսել եմ ինչ-որ տեղ, նա արվեստաներ չեմ, բայց, նկատելով այդ ընդհանրությունը, անպայման ուղում եմ մտադրել զրանց նմանակները: Մի քանի անգամ ետ ու առաջ եմ տալիս մազազաթյա թերթերը և հիշողութամբ հասնում եմ Ախալցխայի Մարտուզ գյուղ, որտեղ տարիներ առաջ տեսել էի 1943 թ. հուլիսիցիս Ավետարանը. խորանների զմագրությունը շատ նման է: Հետո Բալ-Թիմորի (ԱՄՆ) Ուոլթերի պատեկությամբ հի 966 թ. Ավետարանը հիշեցի, ինչպես և կենդանուրդի էրմիտաժի վաստակավոր արվեստարան Տաստյանս Բլումսթրիտյի հողմածներում քննված 11-րդ դարի հայկական մի երկու մատյան, որտեղ արվեստարանիչները նույնպես պատեկելոված են մի էջի վրա, իբրև մտա կանգնած. խոստն վկայություն այդ ձեռագրերի հնություն:

Իմ ուշադրությունը ավելի գամվում է «Նորհրդավոր ընթերցի» յուրահատուկ պատկերազրույթյան վրա: Հայ և օտար միջնադարյան որմնակարչության ու մանրակարչության մեջ այս տեսարանը որոշ տարբերակներով պատկերում է Քրիստոսին և իր 12 աշակերտներին սեղանի շուրջ նստած: Քրիստոսը արգեն հասնել է, որ այս գիշեր Կրանցից մեկը պետք է իրեն մատնի, բայցը հասնելից նա և ժամ առաջ ուզում են իմանալ ով է դավաճանը: Հայտի օրինակում Քրիստոսը կանգնած և սեղանի աջ կողմում իր ողջ կերպարանքով, նրա դեմ հանդիման, սեղանից դուրս, պատկերված է Հուզան՝ նույնպես ողջ հասակով, բայց ավելի փոքրամարմին, կարծես ծաղիկող ուզում է հուշել գավաճանի ով լինելը, իսկ մնացյալ աշակերտները սեղանի շուրջ ներկայացված են ավելի խորհրդանշանակ հերթով՝ միայն զուգուրներով: Առանց վարանելու մտաբերում եմ Մատենադարանի եղպի մատյաններից մեկի՝ Ձ 316-ի նույն տեսարանը: Դժբախտաբար սրա ո՛չ գրիչն է հայտնի, ո՛չ ծաղիկողը, ո՛չ ժամանակը և ո՛չ էլ գրչության վայրը: Մեր արվեստագետները ձեռագրի ժամանակը դնում են 14-րդ դար, իսկ մանրակարների ընդհանուր ոճից երևելով՝ այն վերագրում են Վաստյուրակյանի զգլորցիին: Իսկ ինչու հետո գնալ, այս մանրակարի լուսապատկերը (սլաշը) բարձրաստիկ դուռադուրկայից Մատենադարանի մի շարք այլ մանրակարների լուսապատկերների հետ իմ պայտասկում է և այդ նույն օրը երեկոյան, կոնֆերանսի օրագրից դուրս, պետք է ցուցադրել Հայի համալսարանում՝ Մատենադարանին նվիրված իմ դասխոսության ժամանակ: Առանց հապաղելու լուսապատկերը դուրս եմ բերում և սկսում համեմատել Հայի տարբերակի հետ: Միայն վերջինիս կատարումը ավելի պարզունակ է թվում: Արդյո՞ք վաղ վասպուրակյանցի մանրակարչության նմուշ է: Այստեղ մեր ուշադրությունն է գրավում նաև այս «Նորհրդավոր ընթերցի» և «Չորս ավետարանիչներ» նկարների ընդլայնակի տեղադրումը խորանների մեջ, որով խորանները ձախ կողմից բաց շրջանակի տեք են ընդունում: Ձեռագրի սկզբում նման գծագրերով երկու խորաններ ևս կան, որոնց

մեջ, արդեն ըստ կանոնի, տեղադրված են համարաբարաներ: Պետք է ենթադրել, որ մատյանի ծաղիկողը թյուրիմացաբար երկու ավելորդ խորան է պատաստել և իր աշխատանքը կամ թերևս մագաղաթը ղուր չկորցնելու համար, նկարները տեղադրել է այդ թերթերի վրա: Մանրակարների նման շրջանակում մեզ այլուր հայտնի չէ: Երբորդ, մանրակարը, «Մկրտության տեսարանը» արդեն շրջանակված է, որի զարդանախշերը նույնն են, ինչ խորաններին: Հաճելի է նոր հուշարձան տեսնել, այն էլ այդպես հասած: Մտորումներս կրում եմ իմ ուղիկիցների հետ: Նրանք ևս ուրախ են, որ իրենց հուրը դո՛՛՛՛՛՛՛՛ է:

— Տեսնում եք մեր Հային ինչպիսի ծպիտով է դիմավորում մեզ,— հրվածքով վրա է տալիս աշխույժ և արագաշարժ Սոնյա Բրենտյուսը:

Անցան մի քանի տարիներ: Բանասիրական ավելի հրատապ աշխատանքները անընդհատ խանգարում էին անդրադասնալու գերմանական իմ շրջագալության արդյունքների: Եվ չնայած որոշ ժամանակ անց ստացա վերոհիշյալ մանրակարների լուսապատկերները, այդուհանդերձ նորից չկարողացա դրանց մասին որևէ հազորդում կատարել Պրոֆ. Բրենտյուսը, հավանաբար արդարացյալ չհամարելով իմ հուշագրերը, 1977 թ. փոքրիկ հազորդումով հանդես եկավ «Հայի համալսարանի տեղեկագրում» և, վկայակոչելով մեր քանակոր հղրակացությունը, սև ու սպիտակ լուսանկարներով ներկայացրեց Հայի արևելագիտական զրգարանի Ձ 1 ձեռագրի մանրակարները:

#### ԳՈՒՅՑԻ ԱՅՑԻՆԵՆ ՊԱՏԱՌԻՆԵՐԸ

Գրքա, 1973, դեկտեմբեր 1

Հայի համալսարանի կադմակերպած կոնֆերանսը տեղի ունեցավ նոյեմբերի 28—30-ը, իսկ հաջորդ օրվանից սկսվեցին շրջագալությունները՝ զեղի Գոթա, Գրեկոն, Ենա և Պոստոլամ:



Գերմանական Տնամյա Գոթաք բաղադրի անունը չուրաքանչյուր սովետական մտավորականի ծանոթ է Կարլ Մարքսի հայտնի «Գոթայի ծրագրի բնագրատեսիլունը» դասական երկից և ինքնբարձրացման հետաքրքիր պիտի լինեն մեզ, կոնֆիրմացիայի սովետական մասնակիցներին, նամանավանդ, որ մենք պետք է ծանոթանայինք Ֆրիդրիխստայն միջնադարյան զգալի գերմանական արվեստի ու կենցաղի թանգարանային ցուցանմունքներին և հարուստ զրազարանին:

Թանգարանում մեզ ուղեվար նշանակեցին մի պատանու, ու ավել քան 15—16 տարեկան Կուսակառուցար շատ զարմացած էինք և թերահավատ, բայց պատանի Մատյաս Կուեը ասելովսի վարձ ուսուցիչներով և բանիմացությունը սկսեց բացատրություններ տալ, որ մեր զարմանքը փոխվեց հիացմունքի: Նա ոգևորված պատմական շեղումներ էր կատարում, մեզ մի սրահից մյուսն էր առաջնորդում, մեր ուշադրությունը հրավիրում այս կամ այն ցուցանմունքի բնորոշ կարևոր մասերումանի վրա: Մեր հիացմունքը Մատյասի նկատմամբ ավելի մեծ եղավ, երբ նա հայտնեց, որ սկսել է ինքնուրույնաբար հայերեն ուսումնասիրել, չէ՞ որ որոշել է արևելագետ դառնալ, իսկ առանց հայերենի իր գիտելիքները շատ թերի կլինեին: Այդպես էր Տամուզված պապաղա արևելագետը: Ժամանակը սպառվում էր, ուստի մեր շքեղությունները թուզարանում ավարտեցինք զրազարանի հավաքածուների թուղիկ ծանոթությունը: Համաշխարհային երկրորդ պատերազմի տարիներին թանգարանն ու գրադարանը շէին տուժել, որովհետև, ինչպես մեզ պատմեց գլխավոր ավանդապահ՝ Հանս Իտախիմ Իոկուբը, կարմիր բանակի մարտիկները մեծ հողատարություն և ուշադրություն էին վերաբերվել մշակութային այս հարստությունների նկատմամբ:

— Երևակայեցեք, — սուզված պատմում էր Հանս Իտախիմը, — ահավոր պատերազմ, ուժրակոծություններ, մշակութային արժեքների բազում տեղափոխություններ, և ոչ իսկ մեկ հատորի ու նմուշի կորուստ: Սա հրաշք է, անհավատալի, բայց իրողություն է:

Գրադարանը ուներ նաև արևելյան ձևագրերի հավաքա-

ծու. ցուցադրեցինք որովա՞մ էին մի բանի արարական ու պարզական մատչաններ:

Երբ արդեն ուզում էինք հրածնալ տալ մեր հյուրընկալներին, Հանս Իտախիմը իմ առջև դրեց կրկնապատիկ հայերենով երկու պատառիկ, որոնք զբաղված էին արարական ձևագրերի շարքում 1707 թվահամարի ներքո:

— Սրանք էլ մեր հայերեն հարստություններն են: Ինչդրև, վայելեցեք. — հպարտ իրենց ունեցվածքով, ասում է պրն. Հանսը:

Իսկապես որ դրանք հետձառա տրված հաճելի աղանդերի տպավորություն թողեցին: Ընդամենը երկու մազազաթ թերթի, բայց մի ողջ մշակույթի նմուշներ այս փորձիկ քաղաքում:

— Է՛, այտտեղ էլ ծանոթների հանդիպեցի՞ք, — կատակով զիմում է ինձ Ուլբեկաստի Գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի ձևագրատան վարիչ տիկին Ալիմյանովան:

Պատասխանելը շատ և շատ հին, բոտ երևույթին 9 կամ 10-րդ դարի, մատչանից կտրված թերթեր էին, որ հետագայում մի այլ մատչանի համար պահպանակներ էին ծառայել, գրություններ երկնապատիկ էր և զրված էր այն ժամանակներում, երբ զենու հայերեն է հնչումը Ղ-ով էր պատահալվում (այդ-այլ, աղեղու-ալելու): Այս պատասխանները 15,3 X 20,8 սմ չափսի էին, յուրաքանչյուր էրում 12 սոր: Իհարկե էչերը ամբողջական չէին՝ կտրված էին վերևից ու ներքեցի: Պարզ է հարմարեցված են եղել նոր մատչանի չափսերին:

Ազետրված մեր հյուրընկալների ուշադրությունից, տալիս էմ իմ հասցեն և ինչդրև, իթև կարելի է, նրան ուղարկել դրանց մանրաժապավենը:

Ինչդրև շատ շուտով կատարվեց:

Երևան, 1974, սեպտեմբերի 1

Հայրս սերաստացի է եղել, մայրս թավրիզեցի: Ես ծնվել եմ թավրիզում: Սերաստացիները ինձ իրենց հայրենակիցոն են համարում, իսկ թավրիզիցիներն էլ՝ իրենց: Ես հաժախաբազու սիրում և հարգում եմ թե՛ հորս և թե՛ իմ հայրենակիցներին:

Մանկուց հորիցս շատ եմ լսել Սերաստիա քաղաքի, երա վանքերի, դպրոցների և անձնվոր ուսուցիչների մասին: Հայրս այնպես սիրո՞ւմ ու շքմոջամբ է պատմել իր ծննդավայրի, ժողովրդի, բարքերի ու սովորութիւնների, համազամ խորտիկների ու ճաշերի մասին, որ ինձ հաճախ թվում է, թե ես հիրավի մանկութիւնս օրերը անց եմ կացրել այդ քաղաքում:

Թավրիզում՝ բացի իմ հորից ուրիշ սերաստացի չէր բնակվում, բայց մեր տանը միշտ սերաստացի հյուրեր են եղել: 1930 թվականներից, երբ Պարսկաստանի միջազգային տարանցիկ ձանապարհների վրա ավտոմեքենաները սկսեցին իշխող դեր կատարել, մեր օջախը փաստորեն դարձավ արևմտահայ, մասնավորապես սերաստացի վարորդների իջևանատուն: Մայրս սիրով, առանց դուշոն ինչ արտունջի, նրանց ընդունում, սեղան էր բացում, անկողնի հարդարում: Զե՛ որ հայրս այս քաղաքում ոչ մի ազգական չունէր:

— Թող սիրաբը թեթեւաւ, մենակ է,— կրքեմն ասում էր մայրս իր հարազատներին, երբ երանք մեզմ կշտամբում էին նրան շատ շարժարկելու համար:

Սրբ փորը էի, ինձ թվում էր, որ այս մարդկանցից կրքանիկ մարդ չկա աշխարհի երևաին. ձանապարհորդում են, երկրներ են տեսնում, կրդում են, ուրախանում: Սեպակն տարիների հետ նրանց խոսքի մեջ սկսում էի որսով պան կակիժի ու ցավի երանգներ, ուրախութիւն պահերին հաճախ էի տեսնում նրանց արցունքները, նրանց երկիրն էլ առաջվա պէս ուրախ չէին թվում: Կամաց-կամաց ծանոթանում էի նրանց զանն ձակապարհին. նրանք կտորածներէրց, ինչպէս

իրենք էին ասում, ազատված տղաներ էին, ամեն մեկը ահա՜ վոր ողբերգութիւնների ականատես:

Յոթ թե ութ տարեկան էի, երբ մի գիշեր արթնացա ծնողներս նեղարանից լավով լացի ձայնից, մտռեցա կիսաբաց դռանը, հայրս նստած սեղանի մոտ հոնգուր-հոնգուր լաց էր լինում, իսկ մայրս էլ անկողնում կուլ կկամ լուռ արտապնում էր: Ի տես ինձ անհասկանալի այս ծանր տեսարանի՝ ես խեղճացած ու դիտիկոր մտռեցա հորս: Նա շքմորեն գրկեց ինձ և ցույց տալով սեղանին բացված գիրքը, ասաց.

— Մե՛ծ պապիդ ու տատիդ չես տեսել, նրանց նկարն էլ, տպված «Եղևնապատում» գրքի մեջ. մի քանի տարի տուռ նձերիկայից հորեղբայրդ է ուղարկել: Բոլորին կտորեցին, չարճեցին: Մեր շնն տնից այս մեկ հատիկ պատկերն է մնացել:— Այնուհետև գիրքը փակեց և կազմի վրայից հատիկ-հատիկ կարդաց, — «Եղևնապատում», մեր Սերաստիո հայտնի ուսուցիչը Կարապետ Գարիկյանն է գրի տեսել:— Հետո նա նորից բացեց գիրքը և առաջին լջի վրա ցույց տվեց հեղինակի պատկանելի նկարը:— Հերոս մարդ է եղել, արտորի ողջ ձանապարհը անցել է ծաղրված՝ կնոջ հազուստով:

Հայկական կտորածների մասին մեր տանը շատ էի լսել, բայց այսպես որդալի, այսքան շոշափելի չէի դպացել նրա ահագորութիւնը: Հորս պատմածից սարսափած զոգում էի. ինչպէ՛ս թն երա ծնողներին ու ազգականներին, ողջ գերդաստանը կտորելի են: Հետագայում հորս շատ ավելի խղճացի ու ավելի խանգաղատանքով լցվեցի դեպի նա, երբ տեղեկացա, որ նրա տաշին կինն ու զավակը զո՛հ են գնացել ահա՜ վոր պատերին:

Հայտնութիւնս այդ գիշերից հետո ես կրքեմն վերցնում էի «Եղևնապատում»-ը, կարդում էի, բայց շատ բան չէի հասկանում, հետո բացում էի հորս ծնողների նկարը և երկար նայում նրանց ժպտուն ու զորովալի դձմերթին, նորից կարդում էի մահվան կարագրութիւններն և սարսափած կիսատ էի թռչնում բնթերցում: Երկուր ժամանակ երեխայի պարզ մտածողութիւնը գրքի վերնագիրը թարգմանում էի «Եղևն», որ տեղի է ունեցել անապատում»։ Է՛՛ որ անապատներն էին

եղի արտոյայտերի վերջին հանգրվանը: Շատ ավելի ուշ հասկացա գրքի վերնագրի ճշգրիտ իմաստը, բայց մինչև այսօր էլ իմ ուղեղում դամբված է «եղեռն անապատում» արտասպառնիկ միտքը: Կարապետ Գարիկյանի, հայագիտության այդ անխոչ մշակի, գիրքը մեր բնտանեկան գրադարանի ամենավերական մատուցներից է, որի պահպանակի մրա հորեղորոտ ձևերով հետևելու մակագրությունն է արված:

«Մեր ազգային անտարանն է այս, զոր հը նորիքն բորբորած սիրով, այրող լիշատակներով ու անվերջ կարօտներով:

Միրելի եղբայրս, Լեոն.

Մեր հայրենիքի, մեր արենակիցներու ու բոլոր պատանան սիրելիներու խաչկտուրիներն ու Գողգոթան ալքէ անուցած սահուղ, կարօտակղ, հոգհատոր իմ եղբայր, պէտք է ուխտան անգամ մը սիրելիներու համախմբումի, աէր հայրենիքի վերաշինութեան համար ուժ տալ միութեան ոգոյն հայ կեանքի մէջ:

Վահան Չուգաբըղեան

Շիրակո, 26 ապրիլի 1925»

Անցան երկար տարիներ: Ավարտվել էր կրթող աշխարհամարտը: Սկզբն վաղուց սպասված հայրենազարմոթյունը Մեր բնտանիքը մերգամիթ ասուլիս կարամաններով հայրենիք կկալ: Երևանում մեր բնակարանը նորից սեբաստացիների ժամադրությամբ դուրձավ: Հայրս այստեղ գտավ արդէն ձեռնուկները դարձած իր դպրոցական բնկերներից մի բանիսին:

Մեր բնտանիքի երջանկոթյունը կատարյալ եղավ, երբ 1959 թվականին Ամերիկայից մեղ այցելութան եկավ հորեղբայրս, անվանի հասարակական գործիչ, լրագրող Վահան Չուգաբըղեանը: Յնտութան մեջ էր բաղմանչուղ ու բաղմամարդ դարձած մեր բնտանիքը, առավել երջանիկ էին երկու եղբայրները, որ 49 տարվա անչառտմից հետո հանդիպում էին իրար: Եորից թարմացան անցյալի բաղդը ու

գառն հիշողությունները. Սերաստիան վերակենդանացավ մեր հարկն տակ:

Հետագա տարիներին և մինչև այսօր հայական տարրեր գաղթորչականերից հաճախ որպես ուխտավոր դրոսաշրջիկներ հայրենիք են գալիս Համասերաստահայ վերաշինաց միութան անդամները և, ընայած հայրս վաղուց հրածնշտ է տվել կյանքին, նրանք լինում են մեղ մտ ու իրենց հոգսերն ու մատրումները կիսում են մեղ հետ՝ որպիս հարազատ սերաստացու:

Այս միութան մի բանի վարչությունները տանյակ տարիներ սփյուռում աշխատել էին մի որեւ պատմարան գտնել, որպնագի գրի առնի իրենց կորցրած ձեռնգալայրի պատմությունը. բայց նրանց ջանքերը հաջողությամբ չէին պսակվել: Ի վերջո այդ աշխատանքը հանձնարարում է երևանաբան բնիկ սեբաստացի պատմարան-ազգագրագետ Առաքել Մատրիկին, իսկ ինձ պատիվ է վիճակվում լինել ձերունագարդ մտավորականի մերձավոր խորհրդականն ու նրա աշխատանքի իմնազգիրը:

Հրեմացա այս աշխատանքների ևս ավելի մանրամասն էի ծանոթանում Արծրունյաց երբեմնի մայրաքաղաք Սեբաստիայի հին ու նոր հարտաս պատմությանը: Ինձ համար, որպես հայագետի, մեր ժողովրդի կրած ծանր տառապանքների հետ մեկտեղ, աճավոր ջուղ էր պատճառում նաև Սեբաստիայի Ս. Նշան վանքի դրազարանի 300-ից ավելի ձեռագրերի կորուստը, ընայած գիտի, որ դրանցից մի բանիսը, այդ թվում նաև Քորոս Ռոսլինի ձագված մի մատյանը, ինչինը հանգամանքներում փրկվել է վաճառքի էին հանվել Արևմտարի աճորդային շուկաներում:

Առաքել Պատրիկի կազմած Սերաստիայի Հուշամատյանը իմնազգրելիս ևս տեղեկացա, որ Սերաստիայի միջնադարյան պատմութան վերաբերյալ գոյություն է ունեցի մի արժեքավոր ձևադիր ազբուր, որը 1825—1829 թվականներին կազմած է եղել տեղի հոգեոր տապիրոջ Հովհաննես Սերաստացին: 19-րդ դարի որոշ պատմություններ ժամանակին օգտվել էին այս պատմությունից, բայց մատյանը կորել էր եղևոնի տարիներին Ս. Նշան վանքի մյուս արժեքների հետ

միասին: Նույն այդ օրերին, երբ Ա. Պատրիկի աշխատության որոշ հատվածներ ստուգվում էին նպատակով՝ թերթում էի «Նոր Սերաստիա» պարբերականի հին համարները, իմ ուշադրությունը դրավեց Սերաստիայի ամերիկյան նախկին բուխի տնօրեն միստր Փարթիչի հուշերը: Ամերիկացի այս ուսուցչին, որպես հայերի բարեկամի, 1915 թ. վտարել էին Քուրբեքայից: Զինադպարից հետո նա վերադարձել էր Սերաստիա և պահանջել բուխում թողած իր գրքերը: Բուխը այդ ժամանակ թուրքական զորանոցի էր վերածված: Ինչպես պատմում է իր հուշերում միստր Էրնեստ Փարթիչը, նա հանձնարեց զարմանում է և ուրախանում, երբ գրագրարանից մնացած մի քանի գրքերի հետ իրեն ևս տալիս հայերեն ձեռագիր մատյաններ, որոնք կոչվում էին Ս. Նշան վանքի:

Հետագայում միստր Փարթիչը Հայկումս հանդիպում է Սերաստիայի նախկին առաջնորդ, տնօրենի քուստեր Քորզում արք. Գուշակյանին և նրան է վստահում իր փրկած մատյանները, իսկ Գուշակյանն էլ իր հերթին դրանք ի պահ է դնում Նրուսազեմի Ս. Հակոբյանց վանքի Մատենադարանում: Այս արժեքավոր տեղեկությունից հետո որոշեցի պարզել թե արդյոք պատահաբար այդ մատյանների հետ չի՞ եղել նաև Հովհաննես Սերաստացու մեկ հետաքրքրող «Սերաստիա պատմություն»:

Իմ կասկածները շուտով հաստատվեցին. 1972 թ. սկզբներին Համասերաստացու վերաշինաց միության միջոցով Նրուսազեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարանից շնորհակալությամբ ստացան իմ ակնյայտ մատյանի մասեր՝ «Մատյաններ» այն էլ երկու ընդօրինակությամբ: Երկրորդ օրինակը ուներ նաև քաղաքի եկեղեցական տարրեր ծուխերում 1827 թ. ընդգրկված հայ լուսավորչական բնակչության ցուցակները:

Հովհաննես Սերաստացու «Պատմություն» ընձեռած էյուլթը պատմագրական տեսակետից այնքան կարևոր ու հետաքրքիր էր, որ Մաշտոցյան մեր մատենադարանի տնօրենությունն նպատակահարմար գտավ արանձին գրքով հրատարակել այն:

Երբ մեր մատուցում այս պատմության հայտնաբերումս

մասին տեղեկություններ հրատարակվեցին, վաստակաշատ քանակեր Գանակի Ստեփանյանը մեզ ամփրպակես տեղեկացրեց, որ իր անձնական զրազարանում ունի այդ պատմության մի ուրիշ ձեռագիր ընդօրինակությունը և սիրահոժար այն նվիրեց Մատենադարանին: Այս օրինակի դրվել Պատմության վերջին կցել էր նաև 1830 թվականից հետո ընկած ժամանակաշրջանի Սերաստիայի պատմության համառոտ պատմություն, որը զմբխտաբար ընդհատվում էր 1857 թվականով: Որոշ ժամանակ անց մի նոր արձագանք ստացվեց նաև Փարիզից. անվանի պատմաբան Հայկ Պերպիլյանը հայտնում էր, որ Սերաստիայի պատմության երկու այլ ընդօրինակություններ պահվում են Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանում: Կարճ ժամանակից հետո ստացա նաև այս ձեռագրերի մանրամասնությունները: Այս բոլոր հինգ ընդօրինակությունների քննական բաղադրությունը 1974 թ. լույս ընծայվեց Հովհաննես Սերաստացու «Պատմություն Սերաստիոյ» պատմագրական արժեքավոր երկի:

\* \* \*

Հովհաննես Սերաստացին միջնադարյան հայ պատմագրության վերջին ներկայացուցիչներից է եղել: 1809—1829 թվականներին զբաղեցրել է Սերաստիայի առաջնորդական աթոռը և հուշակվել իր ծավալած լուսավորական ու շինարարական աշխատանքներով. երա չանբերով Սերաստիայում բացվել են նոր դպրոցներ, վերակառուցվել են ճարտարապետական հուշարձաններ:

19-րդ դարի առաջին տասնամյակները ծանր ժամանակներ էին ինչպես ողջ Արևմտյան Հայաստանի, այնպես նաև Փոքր Հայքի համար: Թուս-թուրքական, թուրք-պարսկական պատերազմները, Օսմանյան կայսրության մեջ ֆեոդալական հակամարտությունների օրումը, տնտեսական անկայուն վիճակը, ինչպես նաև հայ եկեղեցու ներսում գաղություն ունեցող հակատեթևները ծանր իրավիճակ էին ստեղծել երկրի հայ բնակչության համար: Պատմական այսպիսի

դայմանկերում է դործել Հովհաննես Սերաստացին՝ արժանա-  
նայով մեծ հարգանքի և յայն ճանաչման:

Մեծ չէ նրա դրական ժառանգությունը. ոտանավորների  
մի շարք, որ տպագրվել է 1825 թ. Քիֆլիսում՝ «Ներքուկական  
նուագրություններ» խորագրով, մի անտիպ բարեզգիբք և  
ամենակարևորն ու արժեքավորը՝ «Սերաստիայի պատմու-  
թյունը»:

Պատմության սկզբի հատվածը շարադրելու համար  
պատմիչը օգտագործել է Աղաթանգեղոսի, Գրիգոր Մազինու-  
թյանի, Մասիեսու Սուհանյեցու, Մամիկ Անեցու և այլ պատմու-  
թյուններում Սերաստիա բաղադրի մասին պահպանված տե-  
ղեկությունները, իսկ ուշ շրջանի համար, որ «Պատմության»  
ստավել կարևոր մասն է, զավազանադրեր, ձևադարական  
հիշատակարաններ, կոնդակներ, ժանարտակներ (համախո-  
սականներ), տապանադրեր, մասնատուփերի արձանագրու-  
թյուններ ու ավանդություններ: Աղբյուրներ, որոնց մեծ  
մասը ոչնչացել է:

Հովհաննես Սերաստացու Պատմության չուրաբանչույր  
էջը մեր ժողովրդի ծանր առօրյայի, օսմանյան բռնակալու-  
թյան դեմ նրա ընդվզումների կենդանի պատկերումն է:

Սերաստիան, ինչպես կայսրություն շատ այլ նահանգ-  
ներ, 18-րդ դարում և 19-րդ դարի սկզբում միջֆեոդալական  
հակասությունների և, դրանցով պայմանավորված, ներքին  
դասերազմների թատերաբեմ էր: Երկրում տիրող անիշխա-  
նություն հետևանքով բռնակալ փաշաները Սերաստիայում  
համախառն փոխարինում էին իրար, ընդ որում ամեն մեկը  
իր հերթին անառնի կեղծքում էր աշխատավոր խավերին՝  
անկախ նրանց ազգային պատկանելությունից: Եվ այնու-  
ամենայնիվ հայերի և ընդհանրապես քրիստոնյաների վիճա-  
կը կայսրության մեջ ավելի ծանր էր: Հետաքրքիր է, որ իրա-  
վական այս անհավասար պայմաններում իսկ հայ ու թուրք  
քնակությունը առանձին ղեկավարում համատեղ պայքարի է  
ելել օսմանյան իշխանավորների դեմ: Պատմական նման  
փաստեր մեր աղբյուրներում քիչ են պահպանվել: Այն իսկ  
ստումով շատ արժեքավոր են Հովհաննես Սերաստացու  
աված տեղեկությունները 1790 թ. Սերաստիայի կուսակալ

Թորոնեճողլի, 1802 թ. Հուսեյին փաշայի և 1808 թ. Չա-  
փառողլի Մուհամեա բըրչլիի դեմ հայ ու թուրք ազգաբնակ-  
չության համատեղ մղած պայքարի մասին:

Սերաստացու պատմության մեջ հետաքրքիր մանրա-  
մասներ կան 12—16-րդ դարերի հայ կեղեցու ներքին  
հակասություններ բացահայտելու առումով:

Արևմտահայության և մասնավորապես Սերաստիայի  
ընկերային-տնտեսական հարաբերությունների ուսումնասի-  
րման անհավտից արժեքավոր են Սերաստացու այն հա-  
զրդումները, որոնք վերաբերում են սերաստացի ջրկրկնե-  
րի 1714 թ. Պոսում գոյություն անեցած «համարվեսա» կազ-  
մակերպությանը, ինչպես և փոքր-ինչ ուշ Սերաստիայում  
գործած համաբարթյուններին: Արժեքավոր է նաև Ս. Նշան  
փոքրի մանրամասն նկարագրությունը, որ կցված է «Պատ-  
մությանը» և լայն պատկերացում է տալիս վանքի տնտեսա-  
կան գործունեության մասին: Ուշագործյան են արժանի նաև  
տարբեր դարերում կյանքի թանկացման, սոփի ու հրդեհների  
վերաբերյալ «Պատմության» տարբեր էջերում գրանցված  
փաստերը:

\*\*\*

Փոքր Հայքի երբեմնի շին ու ժողովուն բազմամայր  
Սերաստիայի պատմության հրապարակումով աշխատել էմ  
իմ որդիական պարտքը հասուցել՝ հոգուս խորքում ոգեկո-  
չելով ինչպես մեր դերբաստանի բազում նահատակների,  
այնպես նաև իմ մանկությունն ու պատանեկությունը իմօ-  
տավորող ու շնչավորող բոլոր ազնիվ ու պայծառ, բայց  
ստատապյալ սերաստացիների խնկելի հիշատակը:

900 ՏԱԲԵԱՆ ԱՎԵՏԱԲԱՆԸ

Երևան, 1974, սեպտեմբերի 25

Նրբ տեղեկացա, որ Տաճատ բաժանա Մարկոսյանի բն-  
տանիքը արդեն հասել է էջմիածին, շտապեցի նրանց մոտ՝  
բարի գալուստ մտախելու և շնորհակալություն հայանելու  
իրենց ընտանիքում պատվող բացառիկ սովբե ինկլայանցող

Ավետարանը հինգ տարի առաջ Մատենադարանին եղիք ուղարկելու համար:

Դարգուն զոյգը Իրանի Արաճանի նահանգում է գրա-  
նվում, Փերիայի գրավառում: Մինչև խոր ծիրաթյուն այսուհ  
է տպրել Տաճատ Մարկոսյանը: Մեծերից լսել, գրքերում  
կարգացել է ինքն էլ զավակներին է հաղորդել, որ իրենց նա-  
խապագարին Շահ Աբասի մեծ սյուրբյունի (բանազայթի)  
ժամանակ են տեղահան արել Ավետայց երկրից ու բշել  
Փարսկաստանի խորքերը: Այդ դժբախտ օրերի միակ վիպն  
հենց այդ սուրբ գիրքն է եղել: Ինչպես իրեն էլ մեծերը  
ամանաթ (ավանդ) թողել, ինքն էլ տարիներ շարունակ իր  
փոքրիկ հոսիկ է քարտզել՝ երբը շոտանալ պատկանական  
երկիրը՝ Հայկ նահապետի աշխարհը, աստված մեծ է, գուցե  
մի օր լույս կբացվի մեր ժողովուրդի համար և մենք էլ  
կրանենք մեր երկրի համահան:

Տաճատ քահանան Երզնանի է, որ Մարկոսյան տունից  
իրեն բաժին բնկավ իր խղճանին (զավակներին ու ընտանիքի  
անդամներին)՝ հայրենիք առաջնորդելու բախտը: Հիմա նա  
էջմիածնում, իրեն հատկացված բնակարանում, ծաղկատիկ  
նստած, սաթե մեծ հատիկներով համրվող զցկելով, դանդաղ ու  
հանգիստ անցած ու զննած օրերի մասին է պատմում:  
Ճիշտ է, երբևէ խառնում է զիպերն ու զիմերից, բայց  
ոչինչ, նրա շուրջը հավաքված տնեցիները, մասնավորապես  
եղիա որդին, ուղղում են ծերունու ակամա վրիպումները:

— Ներող եղբ, հայրիկը շատ էլ ծերացել: Գիտե՞ք քանի  
տարեկան է: Ինծուհի հիշող: Զատ քան է մտացել, բայց մեր  
Ավետարանի պատմությունը շատ լավ է հիշում, — նոր Զու-  
ղայի բնգծված բարբառով մեզ բացատրություն է տալիս  
եղիան: Իսկ հայրը անկենդան հույսերով նայում է որդուն,  
զգիտես զայրանում է իր խուրը կարելու, թե հպարտանում  
իր խոր ծերությունը մաստնաշելու համար:

Տաճատ Մարկոսյանին խնդրեցի մի քանի տեղեկություն-  
ներ տալ իրենց գերդաստանի այս հինավուրց հուշարձանի  
մասին:

— Աղա ջուն (սիրելի պարոն), թե մեր սուրբ գիրքը  
տեսել ու կարգացել էս, էլ գո՞ր ես հարցնում, — մեղծ կըշ-

տամբում է ինձ, բայց ստանց պատասխանի սպասելու դան-  
դաղ ու ծանր, բռնեղը հաս-հատ արտասանելով, սկսում է  
պատմել:— Կարողեմ մեր Ավետարանը ողջ Պարսկաստա-  
նում մի հատ է եղել, հայրաթի (թերև) Հայաստանում էլ դրա  
նությամբ մի երկու գիրք լինի, թե լինի: Ճիշտ է, Ավետա-  
րանը ձերացել է, ինք անգամ հայրու տարեկան է, բայց էլի  
բուրբից երխասարդ է, ինչքան էլ պիտի տեսնի, Շահ Աբա-  
սի օրերում ինքն էլ է գաղթել, հայրաթի ու հայրաթի խնդ-  
րել են մայր Աբարսի ջերբում, բայց ինքը ազատվել, զնացել  
գուր է եկել Շոշ՝ Սպահան: Պարսիկները այդ քաղաքի մա-  
սին ասում են՝ «Եփանահան Եսաֆը ջահան», այսինքն՝ «Սպա-  
հան» աշխարհի կեն», դու հասկացիր, որ աշխարհի կեսը  
արժե: Բայի՛ (այո), աշխարհի կեսը արժեք, բայց մեր ժո-  
ղովուրդի հերք հանեց, մի աշխարհ՝ հարստություն ունեցող  
մեր հայերը ժաշվեցին, ժաշվեցին, խեղճացան, բայց աստու-  
տված շնորհով նորից ոտիկ այնպեցին: Ավետարանը դե-  
մացավ, մեր պաղոբըրը աչքի լույսի պես պահեցին, վերջում էլ  
ինձ ժառանգություն թողին: Ժողովուրդը հավատում էր  
նրա զորությանը, բայց չգիտեր. նրա տարիքը Որտեղի՞ց  
իմանար, կարգավ գիտե՞ր ի՞նչ՝ քահանա, նույնպես չգիտե-  
նրա տարիքը: Գիրքը տարիներ չէինք բացում, պահում էինք  
մետաքսի մեջ, այդ մետաքսի գործվածքը հետն եմ ուղարկել-  
տեսնել՝ եք, չէ՞:

Սրբ ծերունու հարցին զրական պատասխանեցի, նա ավե-  
լացրեց. արձաթի կազմն էլ մերոնք են պատրաստել տվել:  
Կազմը շուտ տաս, գրված է. «Ի յանդատոց գերդաստանի  
Մարկոսի, Անտոնի և Յարութիի Միրզաբանեհան Կուրբեցու  
Ս. Անտարանս Ս. Յակոբ Եկեղեցուն Ղարգուն գեղը»: Մար-  
կոսը հայրս էր: Ողա Շահի ժամանակ սելջուխի (անձնագրի)  
հրաման ելավ, ես էլ նրա անունով արձանագրվեցի. ասացի՝  
թող ազգանունս հայկական լինի:

Այնուհետև Տաճատ քահանան պատմում է, թե ինչպես  
զեռես պարսից Մագաֆարեղոսին շահի ժամանակ, մաշրու-  
թիաթի (պարսկական նոր սահմանադրություն) օրերին, Լո-  
րեստանի ցեղերը համախ էին հարձակվում Փերիայի գյուղերի  
վրա, հայ ու պարսիկ չէին նայում, այան-թայան էին անում,

ալչիկ ու քանկ հարսներ էին փախցնում: Խաղաղ օրերին նրանց կանայք հասնալո էին ուխտի գալիս մեր սուրբ գրերին, իրենք մասնակցական էին, մեր հավատքին էին մատուցանում: Ընեց երկիրը խառնվում էր, լորերը նորից էին գալիս, գայլի պես ամպոս օրվա էին սպասում, որ շքարի (որսի) էլենև: Մեկ օր էլ նորից թափվեցին մեր գլուղը: Տոնական օրեր էին, Ավետարանը եկեղեցում էր, շահաբերից թարցնել, փախցրեցին: Հայերը գնացին լորերի կտերից, անգամ կոճվ եղավ, այդ ժամանակ խաչիկ հորեղբայրս սպանվեց: Հետո անցավ ժամանակ, մեր ժողովուրդը գնաց խանի մոտ, բերանը քայքայեցրին, մեր Ավետարանի դարբան (շարժաթական առանի կողմից վաճառքված սեփականություն թողթ) մեղեղ հանեցին և ի վերջո Ավետարանը հետ բերին: Մատուց արհնը, որ այս անգամ էլ չար խախտեցին:

Մերունի Մարկոսյանը, փորթ-ինը դաղար տվեց, անկցի-ներին կարգազրեց իրեն ու հյուրերին թե առ և շարունակեց իր պատմությունը: Ողա Շահճը դեռ չկար, դեռ գահի վրա էլ չէր բարձրացել, մեր նոր Ջուզան մի գիտուն վարժապետ էր եկել, լուսահոգի Գարեգին բաճառայի հյուրն էր: Սա վարժապետին պատմում է մեր զրբի մասին: Նա է՛ թե գնաց անտեսներ: Եկան: Վարժապետը նայեց-նայեց, շուտ տվեց աչ, շուտ տվեց ձախ, մի քանի քան կարգաց և մեկ էլ ոտքի կանգնեց, Պոսի լեզվով ինչ-որ բաներ ասաց և ուրախությունից զգվեց ինձ, թե՛ ծո, Տեր Տաճա՛ս, դու աշխարհի ամենախաբուսա ու երջանիկ մարդն ես, գիտե՛ս քանի տարեկան է քո Ավետարանը: Ասացի՛ մի երեք-չորս հարյուր տարեկան կլինի: Ասաց՝ ոչ, ութհարյուր հիսուն, մի քանի անգամ կրկնեց՝ ութհարյուր հիսուն, պրփավ է հայաց Տա ժե՛ Լ՛ թե թվականին: Հիմա, աղա ջո՛ւն, դու հաշվիր, 1974 փրկական թվականն է, տես Ավետարանը քանի տարեկան է. ինհարյուր և մի խորդա (փորթ) էլ ավելի (նկ. 4):

Մի ծերունի զրուցակցի անարտահայտելի զեմը արդեն փոխվել էր, մարդը աչբերում մի խորը բավականություն էր հիպսավում: Ծնեցիներն էլ շատ ուրախ էին, մեծերը հպարտությամբ մերթ պապին էին նայում, մերթ ինձ:

Ես դիմում եմ ծերունուն:

— Արցախը ձեր հիշած Գարեգին բաճառան պարսկերեն-հայերեն բառարանի հեղինակ Գարեգին կիրակոսյանը չէ՞ր: — Այո՛, այո՛, հենց էդ մարդը:

— Նշանակում է դուք հանդիպել եք հայտնի լեզվաբան պրոֆ. Աճառյանին: Նա է այդ թվականներին նոր Ջուզանում եղել և կիրակոսյանի բառարանի համար առաջարկան գրել:

— Վալլահ, անուր չեմ հիշում, բայց երևում էր շատ գիտուն մարդ էր, մեր Փեխրիակ լեզվից բառեր էր հարցնում, մեկ-մեկ էլ համարներն էր անում:

Ըստ երևույթին, իմ այս փորթիկ միջամտությունը խանգարեց Տեր Տաճառին. նա սկսեց ուրիշ զեպրերի մասին պատմել, բայց նդիան թույլ չտվեց ծավալվել և Ամերիկայից եկած հայի մասին հիշեցրեց:

— Բա՛լի (այո), երկարացնելով ա ճեշտներ, մի նոր պատմություն սկսեց Տաճառն Մարկոսյանը.— Ողա շահճը նոր էր Իրանի գահից վրա բարձրացել, դեռ մեր հայկական զբաղյուցները չէր փակել, մի օր էլ մի օտարական հայ մարդ երևաց, թե ես Ամերիկայից եմ, հայերեն զրբեր եմ անունում: Մեր մատչանը ցույց չտվի: Բայց խարար ուներ Ասաց 10 թուման կտամ, ասացի՛ ծախս դիրք շունենր: Շուտ եկավ, թե 20 կտամ, հետո հասցրեց 50 թումանի: Այն ժամանակ թումանը ոսկու գին ուներ, հիմա է, որ մի շահուն էլ գին չուներ: Ասացի՛ խե՛չր, խե՛չր (ո՛չ, ո՛ւշ): Բարկացավ, ասաց զու ին՛չ և հասկանում, սուր տանեմ Ամերիկա, քո անունն էլ թերթերում կգցնեմ: Էդ մարդը շատ խոստումներ արավ, բայց անօգուտ: Ասացի՛ սրա զիբը Շահճ Արստի սյուրդյունի ժամանակ Արստ գետի պղտոր ջրերին մատուց եղած մեր ձեբալարներն ու քոչերիկն եմ կարե՞ղ և դարս փոխարինել: Ասացի՛ իմ հայրը ինձ ասել է, նրան էլ իր պապն էլ ասել, թե մեր Ավետարանը մեր սուրբ երկրից եկել, այնտեղ էլ պիտի վերադառնա: Ամերիկացին քոս ու փոշուն գնաց: Բայց մեկ շտուպայ: Իրանից մի տասը տարի անաչ նորից էր եկել, արզեն շատ էր ձերբացել: Ինձ տեսավ, զարմացավ: Բան չասաց, հայեց, նայեց և հարցրեց, թե՛ քանի տարեկան ե՛ս: Էդ փաղար սուխթի (շան որդու) միտքը հանգացա, ուղում էր ասած իննել, թե դու դեռ կենցաղան ե՛ս: Ասացի՛ ինչքան

որ քո բեֆո ուղի՝ 50, 100, կուզես 200 տարեկան եմ: Այնքան պիտի ապրեմ, մինչև որ Ավետարանը հասցնեմ իր հսկական տեղը:

Հետո տեղեցիները խնդրեցին պատմել նաև բժիշկ Կարո Միրևայանի մասին: Այս բժիշկի անունը ինձ վաղուց էր ծանոթ: Նա իր բարձրագույն կրթությունը ստացել էր Անգլիայում և իր ծննդավայրը վերադառնալուց հետո զբաղվել էր բժշկությամբ, եղել է մեծ գրքասեր, բանասիրական հողվածներ էր ստացրել անգլիական արևելագիտական պարերկրականներում: Շատ լավ իմանալով, թե ինչ մեծ մշակութային արժեք են ներկայացնում հին գրազգիր մատյանները, լինեն դրանք հայերեն, պարսկերեն թե արաբերեն, նա իր բժշկական գործունեության ընթացքում հայ ու պարսիկ ընտանեկաններից բազմաթիվ արժեքավոր ձևազարդ ձեռագրեր ու գիվանական փաստաթղթեր է հավաքել: Կյանքի վերջին տարիներին այդ բոլորը նա փանոսել է Կաթիճոտնիայի համալսարանին: Այս հավաքածուն ես տեսել էի 1972 թվականին:

— Բալի՞ (այո) .— շարունակում է իր խոսքը Տաճատ Մարկոսյանը, — հենց այդ պարուն բժիշկը մի օր եկավ, թե էսնեց ու էսնեց, ես քո եղիս որդուն բուժել եմ, իմ վարձը պիտի ստա, բայց փող չեմ ուզում, քո Ավետարանը տուր, դու ի՞նչ պիտի անես, ես քեզ տպադրեց կամար, և կեսն եկեղեցում: Ասացի, պարուն բժիշկ, ավալան (նախ և ստաջ)՝ ինչ դու ստում ես, ճիշտ է, բայց իմ եղիս որդուս փրկողը ասոված էր, սանիան (երկրորդ)՝ դու չլինեիր՝ մեկ ուրիշ բժիշկ ձար կաներ: Սրան էլ շատ բաներ ստացի ու ճամփու գրի:

Այնուհետև Տաճատ Մարկոսյանը սկսեց Պարսկաստանի հայերի ներգաղթի մասին պատմել: Ռեզա շահը թախտից ընկնելուց մի քանի տարի հետո, երբ մեր հայոց կարմիր բանակը Քեդուլը առավ, ներգաղթի հրամանը զուրս եկավ: Ասացինք՝ վախճը եկել է, որ մենք էլ մեր պապերի երազը կատարենք, բայց ստաջին տարին մեր անունը դուրս չեկավ: Երկրորդ տարին էլ էզ Ղավամբ (Իրանի ժամանակի վարչական Ղավամբ այ-Ասթանեն) մեր Տամֆին արգելք դրավ: Այսպես մի քան տարի էլ անցավ, շատերը փարիշան դարձան (Յըվատության մատնվեցին), ախր տուն-տեղ ժողի:

գիացել թափվել էին Թեհրան, թե էս է Հայաստան պիտի գնան: Մենք նույնպես հույսով ապրում էինք: Այնին օր հաշվում էի, թե Ավետարանս բանի տարեկան է դառնում, ես էլ երա հետ էի ծերանում: Հասավ 1969 թիվը, մեր գիրքը դարձավ ուղիղ 900 տարեկան, ես էլ 90 տարեկան: Կամայ-կամայ ձեռքից-տարից ընկնում էի, հետո Ավետարանիս մուշթարիներն էլ գնալով շատանում էին: Շատ ու շատ էի մտածում. էս է, ես կմտնեմ մուրազը սրտիս, իսկ գիրքը անտեր կմնա: Մեր եղիս որդին էլ դիմետուն էր բացել, հաց էր վաստակում: Ինքը խուրը էր, չէր խումս, չէր ծխում, չէր շուայում, բայց կապած ուներ, թե մարդ է, ո՞վ գիտե, կարող է մի օր նեղություն մեջ ընկնել, սատանան էլ խափի և մեր սուրբ գիրքը շան ու զեխ բաժին դառնա: Շատ գիշերներ լուսացրի և վերջը եղիս որդուս ու ազգականներիս հետ խորհրդի նստեցի: Որոշեցինք Ավետարանը մի կերպ Հայաստան հասցրել: Էս գործում ինձ շատ օգնեցին մեր Հարություն և Ղազար Մարկոսյանները: Որոշեցինք և աղպկես էլ արեցինք: Երբ ձեզնից ստացական եկավ, նոր դուրս հանգիստ դրի բարձին, ստացի՞ Տաճատ քահանա՞, դու քո պարտքը կատարեցիր, հիմա կարող ես աշխարհից հանգիստ գնալ: Բայց արի տես, որ Ավետարանը քեցաց հայրենիք, ազաւովեց պերտությունից, մենք չազատվեցինք նեղություններից: Պարսիկները հոտը առել էին, հա գեմու-գալիս էին, թե ուխտի ենք եկել, Ինչըրը (Ավետարանը) հանիր: Մի մահանալով (պատրվակով), մի գավաթի գինիով կամ օդիով մի կերպ պրծնում էինք: Ինքզաղթը նորից սկսվել էր, իսկ մեր անունը ցուցակներում դուրս չէր գալիս ու չէր գալիս: Մի օր էլ Սպասանից մի ոստիկանապետ եկավ, հետև էլ մաչլիսի հայ նոմալեղեն (պառլամենտի հայ ներկայացուցիչը), թե Ավետարանը մեղտեղ հանիր, թե չէ հերզ կհանենք: Արյունը դիխիս խփեց, էլ վախ չունեի, բայց ինք ինձ ստացի՞ Տաճատ քահանա, հանգիստ կաջ: Շուռ եկա ոստիկանապետին, թե՞ դորբան (մատաղ), էդ գիրքը Տահ Աբասի ժամանակ Աբասի էն ափից էր եկել, այնտեղ էլ վերադարձավ: Հետո ձեր ոստիզը (ստացականը) հանցից: Հայ մարդ կարողաց, կարծես աշքերում ուրախություն երևաց, թարգմանեց ոստիկանապետին: Նա



էլ կատարեց, մի ուժեղ քաշիցա (այստակ) տվեց ինձ, ես բնկա գետին, շուտ եկաւ Շահ Արսէր Տոբն ու մտրք, ինձ էլ հետեւերը մի լալ հայհուցի ու թողց հետագալ: Խրիզանս դոզում ու լացում էր: Ինձ բարձրացրին: Ասացի՝ թե սրանով պրծնենք, փասք պիտի տանք աստծուն: Հետո էս ամենի մասին գրեցի ձեզ: Շնորհակալ եմ, ներգաղթի մեծազորը Երևանից գրել էր սաֆարաթխանա (ղեկավարուն), մեզ հերթից դուրս Հայաստան ուղարկեցին: Էլ հիմա դարձ չունեմ, էս սուրբ հողում աչքերս կարող եմ հանդուս փակել:

Երբ Տաճատ Մարտիոյանը վերջացրեց իր պատմութիւնը, ես ոտքի կանգնեցի, շնորհակալութիւն հայտնեցի 95-ամյա ծերունուն և հրափրեցի ընտանիքով հանդերձ գալ Մատենադարան, տեսնել թի ինչպես ենք պաճում իր մասունքը: Սերունին ձեռքով հակադրեց իր փոքր ես նստելու — Լիհ՛, որդի՛ս, դու ինձ ասա՛, կարդացե՛ր էս մեր Ավետարանի միջի տեղեկութունները, ախր էն պոլսեցի գիտուն վարժապետը ասում էր, որ մեր գիրքը սուրբ Անանիա նարեկացուն է պատկանել: Մինչև այսօր չեմ մտազել: Ասում եմ՝ չիբի մենք նարեկացու ազգ ու ջեղից ենք. թե չէ Ավետարանը ինչո՛ւ էւրօքան տարի մեր ընտանիքում պիտի մնար: Մեր Ավետարանի մասին պարոն Անու Միհնաչանն էլ է իր գրքում գրել:

Երբ տեսա միամիտ ու գեղջուկ ծերունին Ավետարանի հիշատակարանի տվյալների հիման վրա ինչ-որ պարտաքննոր է հյուսել, հայտնեցի, որ իսկապես Անանիա նարեկացու ասունք կա այդ մասայնում, բայց դա զայն էլ այն հիմքով վավետարանից, որից բնօրինակվել է Մարկոսյանների ավետարանը, իսկ նախազաղարիտը օրինակը ենթադրվում է: օր Մկրտչայ Մաշտոցի ձեռքով է արտագրվել:

— Այ բարա՛, — օրբայցած Ժոյ տվեց Տաճատ Մարկոսյանը, — շատն մենք սուրբ Մկրտչոյի գերդատանից ենք: — Իմ բացատրութիւնը յուրովի ընկալելով, ամբողջ հողով հրձվում էր ծերունին: — Լսեցի՛ր, Եղիա որդի, բո խրիզանին կպատմես էս ամենը. էլ մեկի մասին ես խաբար չէի: Օրերը որ տարանան ոտքերն էր էլ մի թիւ պնդանան, էս անպայման կգամ մեր Ավետարանին տեսութիւն:

Մեր ավտոմեքենան գյուլի ասֆալտապատ ոլորապտույտ փողոցներից անցնելով՝ դուրս եկավ Խորակառույց շէնքերի շրջանը, որը տեղացիները ուղղակի «Միկրո» են անվանում, կրճատելով Հրազդանի միկրոշրջան անվանումը:

Մեզ առաջնորդում է Մելիքսեթ Պողոսյանը, որին բոլորը շրջանում հարգանքով «Ապրե» են անվանում:

Մելիքսեթ Ապրեը յոթնամասնի մոտ մտրդ է, շրջանի բոլոր անկյուններին ծանոթ. ինքն էլ չի հիշում, թե բանի դասարանի կրթութիւն ունի, բայց գրի ու գրականութեան սիրահար է, խոսում է հյութեղ բարբառով՝ մեկ ընդ մեկ գրական խորթին բառերով համեմելով իր խոսքը: Մի բանի տարի առաջ ես եկել էր Մատենադարան պարզելու իր հայրենակից ընդամացինների ծննդարանութունը: Եվ հերավի, Մատենադարանի արխիվային բաժնի աշխատակիցների զգոթիամբ նա պարզեց, որ 1828 թ. Պարսկաստանի Աւստասի շրջանից Հայաստան տեղափոխված ո՛ր գերդատաններն են ընտելութիւն հաստատել Ախտաի շրջանի Թնդամալ գյուղում (ներկայումս Հրազդանի շրջանի Զրառատ թաղամաս): Մելիքսեթ Ապրեը Երիտասարդի ավտոնով շրջում է գյուղերում, հետախուզում փնտրում Երևանի պարզելու համար, Հայաստանի գրաստների ընկերութեան ցուցումներով հաշվառման է վերցնում առանձին ընտանիքներում պահող հնատիպ գրքերը, ծրարներ է մշակում Հրազդանում գավառագիտական թանգարան ստեղծելու համար:

Օգոստոսյան մի շոգ օր Մելիքսեթ Ապրեի հետ ճամփա էլանք ձեռագրերի հետքեր որոնելու Ամբոջ օրը շրջեցինք շրջանի գյուղերում, բայց ձեռագիր մատայններ չգտանք. որով մարդկանց մոտ միայն մի բանի հնատիպ գրքեր կային: Երեկոյան կողմ մտանք Հրազդանի «Միկրո» կողմը թաղամասը Այստեղ վերջին տասնամյակներում ընտելութիւն են հաստատել Երանից հայրենագրավում շատ ընտանիքներ: Հինգհարկանի շէնքերից մեկի մոտ Մելիքսեթ Ապրեը վարորդին խնդրեց մեքենան կանգնեցնել:

— Մտիկ ստ' ր,— դարձավ նա ինձ, կեսն էտանդ Պարսկաստանից մի մարդ կա, կուշոր մի խին գիրք տե՛ր, բայց չիղև գրուկ ի, թե սպուկ: Կեսն մարդը շանց չի տար: Բարձրանում եմ մատնանշված բնակարանը: Դրան վրա փակցված պղնձն ախտառակի վրա կարգում եմ՝ Կարապետյան Ե.: Դուր բացում է 14—15 տարիկն մի աղբիկ, դարձացած մի պահ՝ նայում է անձանոթին և սպա բողբոջավարի հրովիրում է ներս: Տանը մեծերից ոչ որ չկա. ծնողները՝ հյուր են գնացել, էթն շատ անհրաժեշտ գործ ունեն, նարոզ եմ սպասել: Այդ օրը երեսնուն մամադրություն ունե՛ր՝ պետք է շուտ վերադառնալի:

Մեկ շաբաթ հետո նորից Հրազդանում եմ. այս անգամ ինձ զինավորում է տանտիրոջ մեծ աղբիկը՝ Անահիտը: Բացատրում եմ իմ գալու նպատակը: Պետք է մայրիկին կանչել, հարևանուհու մոտ է: Քիչ հետո ներս է մտնում միջին տարիքի մի կին՝ քիչ մտածոց ու անհանգիստ:

— Ձեզ ինչու՞ է հետաքրքրում այդ գիրքը: Հին է, մեր պապերից մնացած, իմ հանգուցյալ կնարարին էր: Հին, սուրբ գիրք է: Պարսիկներին մոտ գերի է եղել, յուսամտոգի կետարա ու իր կերայրը մի տուրակ փոջ են տվել ու ետ առել: Արժվանում ապրող Դավթի մոտ պահվող «Քուռ մանուկ» ավետարանն էլ փերեայից են բերել:

Տիկին Սալբին, առանց սպասելու իմ բացատրություններին ու հարցումներին, մի բանի լուպեում նոր Զուղայի շեշտված խոսվածքով ավել ձեռագրի ողջ պատմությամբ, ավելին՝ ձեռագրի մի նոր հասցի էլ նշել: Զավզավ ներքին հրճվանքով աշխատում եմ փարատել տանտիրուհու տարակուսանքները, ջուլց եմ տալիս Մատենադարանի պաշտոնական փայականը, որով թուշատրվում է անհատ բաղբոջարների մոտ գտնվող հին ձեռագրերը ուսումնասիրել ու հաշվառման վերցնել, պատմում եմ մեր աշխատանքների, Մատենադարանում պահվող նման բազմաթիվ ձեռագրերի ճակատագրի մասին: Այստեղ Անահիտը հասնում է ինձ օգնության. ասանամյակը ավարտելու տարին ես իր դրոջբանակ ընկերների հետ այցելել է Մատենադարան, հիացել հին ձեռագրերով:

Քիչ հետո Անահիտը իմ առջև է դնում մետաքսե թաշկինակի մեջ փաթաթված Ավետարանը: Տիկին Սալբին խաշակերում է երեսը: Երեխաները հավաքվել և ակնդեա ու ակնածանքով նայում են սեղանի վրա գտնվող կապոցին. բռտ երեսույթին նրանք կապոցը բաց վիճակում չեն տեսել, չէ՞ որ ծնողները այն պահում են փակի տակ: Բացում եմ թաշկինակը, իմ առջև է կանգնի կեսը և սկզբի թերթերը այրված մի մատյան: Ախտո՛ս, շատ ափսո՛ս, ս՛վ է անգործութայան այրել այս հուշարձանը, հավանաբար սրա մոտ մոմ է վառվել: Այրվածքը շատ հին չէ:

— Քե՛հանում կհօրաքս սուրբ գիրքը պահ էր ավել Հեշմաթիյե թաղամասի Նարախան եկեղեցուն: Կրակ ընկավ, ամեն ինչ վառվեց, միայն մեր գիրքը փրկվեց. մոռնեմ դրա դրությանը: Հնեց իր անունն էլ «Զորավոր» է, — խորը հավատով պատմում է տանտիրուհին:

Ահում եմ ձեռագրերը նկարագրել, տանտերերին բացատրելով, որ այն ոչ թե մազազաթի վրա է գրված, ինչպես իրենք են կարծում, այլ որդրեկ հաստ ամբիթի, որ էթե նորից անգլոյշ լինեն՝ ձեռագիրը կարող է մտրոչությամբ այրվել:

Ընդօրինակում եմ Զարբախան վանքի գրչի 1614 թ. հիշատակարանը շահաբաշյան բռնազաղթի մասին. թվում է ինձ, որ այս տողերը ինչ-որ սուղ կաղաղացել եմ: Մի բանի օր հետո Մատենադարանում կատարած ստուգումներից պարզում եմ, որ 50-ական թվականներին այս ձեռագիրը տեսել և նկարագրել է Արևնայի Մխիթարյան միաբանության անդամ վաստակաշատ Զ. Ռայանը. նկարագրությունը սպազբված է «Հանդես ամսօրյալի» 1953 թվականի համարներում: Զ. Ռայանը այստեղ բաց է թողել 1946—48 թթ. ձեռագրի տերերի թիզած նոր հիշատակագրությունները, որոնք հետաքրքիր են այն առումով, որ աշխատավոր գլուղացուցու պարզ խոսքերով ցուցադրում են վարանդի մեր ժողովրդի դարավոր երգանքներն ու դրանց իրադրությունը:

Ձեռագրի գրչի Զարբախան 1614 թ. ընդօրինակված այս Ավետարանում արտագրված է մի բանի տարի առաջ մի այլ մատյանում իր իսկ գրած ընդարձակ հիշատակարանը Շահ Աբասի կառավարչության հուների բռնազաղթի մասին (ի դեպ

այդ մատչանք ներկայումս պահւում է Մատենադարանում), Անուգորի էջերում նորից ու նորից խորք կսկիծով, պարզ ու անպաճառնի խոսքերով արձանագրում է հայրենի երկրից տեղահան արված անօթեան ու անպատասան իր հայրենակիցների ծանր կյանքը. «Գրեցաւ, նկարեցաւ, կազմեցաւ... Անտարանս ի ՌԿԿ հայկազեան տամարի (1614)... Ի դառն և ի նեղ ժամանակն, որ Թաղտար իր պարտից կեղև Շահ Աբաս անուն և զաշխարհս հայոց անրեոց և այլելով, անբեւշտ, գերայցոցանկելով: Այսպէս եմք ի տառապանս, և զապագայիցն Աստուծոյ է միայն դիտելալ»:

Աստուծոն հայտնի այս ապական տեսմ է ոչ ավելի, ոչ պակաս, քան Երեք դար և 64 տարի: Չնուգորի էջերը լռում են այս ահա՛վոր երկար պանդխտութեան մասին, միայն 1946 թ., էրբ սկսվում է զանգվածային հայրենադարձությունը, ձևազրի վերջին Ստրիբր՝ Թովմաս և Սարգիս Կարապետյանները քորնում են մի հիշատակագրութիւն, որից պարզվում է, որ 1916 թ. նոր Զուղայի շրջանի Փեհրիայի հայական գյուղերի Բալանի ժամանակ դերվում է այս «Զորավոր» կոչվող Ավժատարանը և երկու եղբայրները մեծ դրամաբով ետ են գնում Միրզական անունով մի բախտիարացու: (Բախտիարցիները Իրանի Ֆարս նահանգում բնակվող բովոր ցեղեր էին, որոնք հաճախ ապստամբում էին կենտրոնական իշխանութեան դեմ, սուան-թալանի նմանբրկում Սպահան քաղաքն ու նրա շրջակա հայ ու պարսիկ գյուղերը):

Կարապետյան կղալայրների հիշատակագրութիւնը շարունակվում է. «Շահարաշայն գաղթի բերած հսկերս Պարսկաստան 1605 թ. մեր նախինքն սարքին պանդուխտ, հայաժայլ վիճակում, թեկուզ հայրենիքի վառ կարոտով մեռան ու Թաղվեցին օտար հորիզոնում, բայց իրենց հայրենակեղ ս. ավանդը մեզ ստորեցրին, թե շնոանաք հայորդիներ ձեր Մայր Հայրենիք ու կղա ալնտալց մի օր ներգաղթը զեպի մայր երկիր: Ահա անցնելով որդուց որդի մինչև օրս, արժանացան: Թեև նոքա նրազեցին, ափսոս շտեսան ս. ներգաղթը: Իսկ 1945 թվականի հոկ. (պետք է լինի ղեկավարներ—Բ. Զ.) հնչեց մայր հայրենի հրավերը յուր պանդուխտ զավակներին:

Օ՛ հ թե ինչ անպատում պրախ առիթ տվեց նեղին՝ սրտերիս և 1946 թ. բացվեց ս. ներգաղթի ճամպան...»:

Հիշատակարանում այնուհետև պատմվում է, թե ո՞ր գյուղերի բնակչութիւնը մեկնեց Հայրենիք, որոնք մնացին: Կարապետյան կղալայրների բնտանիքները փոխադրվում են Թեհրան՝ կարթումաններով Հայրենիք մեկնելուս Այս կապակցութիւնը ձևագրի մեջ մի նոր հիշատակագրութիւն է արվում.

«Վճ ահա այսպէս մտտ երեսուն տարի ծառայել ու պահել ս. Ավժատարանս մինչև ս. ներգաղթին զեպի Մայր Հայրենիք 1947 թ., որ և հիշյալներս մեր բնտանիքով, սերտ սիրով ու մեծ զերգաստանով զնացինք Հայաստան»:

Թովմասն ու Սարգիսը գրում են այս տողերը, բայց ավա՛ղ ջաղաքական դեպքերը փոխվում են, ներգաղթը Իրանից դադարում է, եվ ահա ձևագրի էջերում երևան է գալիս մի նոր արձանագրութիւն.

«Ներգաղթի պատճառ, որ Հաչողվեց Բուրվարուց մնացալ 6 գյուղն զեպի Մայր Հայրենիք ներգաղթելու, Բուրվարուց լվեցին Թովմաս և Սարգիս Կարապետյանք. Թովմասն զեպի Բաղաղ գավառն Աբասբաղ գյուղն բնակվեց մինչև մեկ տարի. 1947 թ. մայիս 22-ին: Աբասբաղից լվեց Թեհրան 1949 մարտի 22-ին: Նաև Սարգիս լվեց զեպի Չափաղ Չառնա գյուղն 1947 օգոստոսի 6-ին: Չառնուց լվեց Թեհրան 48-ի ապրիլի 6-ին: Մեծ տառապանքով ու շարքաբեկով զբաղվեցին իրենց ապրուստին, որ իրենց նախկին ապրուստն զուրգատեստեցնուն բոլորովին ձեռնից կրած: Այդ շարքարանքին զիմեցին»:

Անցնում է մի ամբողջ տասնամյակ ևս: Չնուգորի գատարի էջերից մեկի վրա 1961 թ. ապրիլի 14-ին Թովմաս և Սարգիս Կարապետյանների զավակները հետնյալ հիշատակագրութիւնն են արել և ստորագրել. «Թովմաս և Սարգիս Կարապետյանները ավանդ դրան Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին Թեհրան Հեշմաթիչն Բաղամասում, բայց գծրախառար սնկգուշուշանում պատմեցալ վաղեցեց»:

Անցնում են ևս մի քանի տարիներ, Թովմաս և Սարգիս կղալայրները, իրենց նախնիների պես չեն արժանանում Հայ-

րենիքի տեսութեան, սակայն նրանց որդիները՝ համատարիմ փետրեանի պատգամին՝ 1968 թ. ներգրգալովում են Հայրենիքը: Եվ ա՛հան ձեռագրի վրա երևան է գալիս մի նոր արձանագրութիւն:

«1968 թ. ապրիլի 29: Սուրբ Զորավոր Ավետարանը բախտ վիճակովեց Հայրենիք վերագրեաւ... Դա մեր անձնական պարտքն է Հայրենիքին»:

\*\*\*

Տիկին Սալբիի հիշած «Քուխ Մանուկ Ավետարանը» գրուելու նպատակով մի քանի ժամանակ Հետո գնացի Արտվյան քաղաք: Այստեղ իմ առաջնորդը եղավ Կարապետյանների ազգականներից տիկին Լուսինը:

Արտվյան քաղաքը շատ նոր լինելով հանգրձո՞ւ ունի մի թաղամաս, որ «նոր» է կոչվում: Այստեղ է բնակվում «Քուխ Մանուկի» տեղը՝ Դավիթ Մեխիբյանը (նախկինում՝ Մելիքսեթյան): Տանտերը բարյացակամորեն մեզ ներս է հրավիրում: Առաջին իսկ պահից աչքի է զարնում տան արտակարգ մարքոսիւյունը, կահույքի խնամքով դասավորվածութիւնը: Երեք սենյակից բաղկացած բնակարանի լայն միջանցքում դրված են գրքերով լի պահարաններ: Տիկին Լուսինը աննպարհին արդեն ինձ հայտնել էր, որ մի քանի ամիս առաջ վախճանվել էր խնամի Դավիթ կինը, և որ նա լավագոյնց ծանր է տանում կնոջ կորուստը:

Դավիթ Մեխիբյանը մասնագիտութեամբ հյուան է, գրքաներ ու ավանդագահ, Պարսկաստանի իրենց գլուխում հազիվ է գրածանաչ դարձել, իսկ այստեղ, հայրենիքում մի քանի տարում արդեն տղաները ավարտել են տասնամյակը, թող խելոք լինեն, շարձարվին և բարձրադաս կրթութիւն տանաւան, ամեն մի պայման ունեն տուն, տեղ, ապրուստ: Բայց արքի տես, զանգատվում է խնամի Դավիթը, որ տղան՝ Ժորժը, ուղում է բնցքամարտիկ դառնալ: Դա հոր սրտով չէ. մտաղ պետք է մի արձեատ ունենա, մեր սրբում գիտութիւնն էլ արհեստ է, մի կտոր ապահով հաց, թե չէ դեա բնցքամարտիկ դառնա, խփեն քիթ մտութը շարդեն: Հետո ողորմածիկ մայրն էլ դրան համաձայն չէր:

Ինչ վերաբերում է «Քուխ Մանուկին», ապա այն շատ-շատ հին գիրք է, իր պոպոկը Հայաստանից են այն Սպահան տարել, աչքի լույսի պես են պահել, ինքն էլ են է բերել Հայաստան, ուխտ է արել նվիրել էջմիածնին: Մաշտոցի գիրք է այստեղ, սա նո միայն սուրբ գիրք չէ: Սա մեր հայութեան վկայականն է: Լեզվ Պարսկաստանում: Մի դիշեր, երբ ինքը նրեխա է եղել, անձանթ պարսիկներ են իրեանել իրենց տանը, մայրը կարծել է նրանք եկել են Ավետարանը տանելու, կես գիշերին ձեռագրեր տվել է մանուկ Դավիթին, որպեսզի տանի հարկան զուղ և պահ տան տեղեղ ապրող իրենց հարգատեաններին: Մոտք գիշերով, երբ ամեն մի բայ անահալատ երեխայի աչքին մի զն է թվում, Դավիթը մատանը տեղ է հացքրել: Իսկ հիմա նա երկուղ շունի, ա՛հա հարգատեանի որոշումը՝ արձանագրված ձեռագրին կցված զարոցական տետրի թղթերի վրա, «Քուխ Մանուկը» պետք է հանձնվի էջմիածնի մատենադարանին:

Յերթում եմ ձեռագիրը, գործախաբար հիշատակարան լուսին, հնագրական ավանդերը 16 կամ 17-րդ դար են հուշում, սկզբի թերթերը ինչ-որ ոչ ճմտան մեկը ետ ու առաջ է դասավորել ու կաղմուկ: Այս մատանը նույնպես տեսել ու նկարագրել է Հ. Հ. Ոսկանը, բայց նրա նկարագրութեան մեջ մի փոքրիկ հիշատակագրութեան կար, որ ես այժմ չի գտնում: Երբ այդ սպանի հարցրի տանտիրոջը, նա հանգիստ ժպտաց, այդ հիշատակագրութիւնը ձեռագրի պատռված վերջին թերթի վրա է եղել, որպեսզի չկորչի ինքը այն տեղադրել է կենտրոնական թերթերի միջև: Ի՞ որ այնտեղ իր պայերի պակսի անունն է արձանագրված՝ «Յոշա Դավիթ»:

Որոշ ժամանակ անց հանգիպեցի էջմիածնի նորաստեղծ ձեռագրատան վարչի Նուպար Տեր-Միքայելյանին և հետաքրքրվեցի, թե ինչ նորութիւններ կան, ասաց, որ նվիր է ստացվել «Քուխ Մանուկ» կողմով մի Ավետարան:

Դավիթ Մեխիբյանը կատարել էր իր և իր նախնիների տխարը:

հրեան, 1977, հուլիսի 15

1977 թ. Հուլիսյան այդ օրը Մատենադարանում արտակարգ աշխատություն էր տրվում, աշխատակիցները անհանգիստ դուրս ու ներս էին անում, իսկ նրանց մի մասը համարվել էր շքամուտքի մոտ։ Սպասողական դրություն էր նման աշխատություն Մատենադարանում ընդհանրապես նկատվում է բարձրատեման Հյուրերի ընդունելության ժամանակ։ Բայց այս անգամ Մատենադարանում սպասում էին Մոսկվայի կենդանյան գրագրանի երկու աշխատակիցներին, որոնք հատուկ առաքելությամբ Երևան էին ժամանել։ Նրանք իրենց հետ բերել էին հայերեն ամենախոշոր ձևագիր՝ «Մշո ճառքներ»-Տանկանի» երկու թերթերը։

Մատենադարան այցելած յուրաքանչյուր օր ակնածանքով է ծանոթացել 1200—1202 թվականներին նրդնկա գաժառի Ավագ վանքում գրագրված այս հսկա մատյանին, հոգեկան մեծ խուճրով է ունկերել ութհարյուրամյա այս ձևագրի ողբերգական, միաժամանակ հերոսական պատմությունը, թե ինչպես մատյանը դեռևս չհաղված գրվել է նյաթի ամիրայից և այս Մուշի ու շրջակա դուռերի բնակիչների 4000 արժամքի գրամի զոհողություններով փրկազնվել է, թե ինչպես մեծ եղևնի տարիներին երկու փախտական զեղչկուհիների շաններով փրկվել է կոտորեց և ի վերջո հիվանդ ու վիրավոր, 61 թերթեր կորցրած, հանգրվանել է Մաշտոցյան մատենադարանում։ Մշո այս ձևագրերի մասին այլևայլ գրույցներ են ստեղծվել, այն բանաստեղծների ու արվեստագետների համար ոգեշնչման աղբյուր է եղել, գրվել են բանաստեղծություններ, ստեղծվել արձաններ։ Նմ դեռ բանի ու բանի սերունդներ մեր ժողովրդի կրած մեծ ողբերգության մասին պիտի տեղեկանան այս բազմաշարյա մատյանից։

«Մշո ճառքներ» ընդօրինակությունը տեղ է երեք տարի Դժվարին ու ծանր է եղել գրիչ Վարդան բահանայի գործը, արտակարգ մեծ են եղել մատյանի չափսերը՝ 70,5×55,3 սմ, յուրաքանչյուր էջում երեք սյունակ։ Մատենադարանի ավագ ձևագրաբաններից Արտաշես Մաթևոսյանի մանրակրկիտ

հաշվումներով ձևագիրը նախնական վիճակով ունեցել է 661 թերթ, որոնցից 16-ը ներկայումս պահպանվում է Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանում, իսկ մեկը Վենեցիայի Մխիթարյանների մոտ, վերջինիս մի արտակարգ վարպետությամբ կատարված նմանաձևությունը ստացվել է Վենետիկից և կցվել համապատասխան կտրված տեղում։

Իսկ Հուլիսյան այդ շոգ օրը հայերենի էին փրագառնում նրա երկու թերթերը, սրանելիք մանրակրկներով զարդարված երկու մատենները, որոնք կենդի սովան զրազարան էին մտադ եղել 1958 թվականին։ Ըստ Ա. Մաթևոսյանի՝ այդ թերթերը զետև կտրված են եղել մինչև 1912 թ., երբ մեկ անգամ ևս համարակալվել է ձևագիրը։

Թանգարանից թանգարան, գրադարանից գրադարան նյութական մշակույթի եզակի նմուշների հանձնման փաստերը հաղորդակ են։ Մակայն կենդան սովան զրազարանի անօրինությունը զիմեց արդյաթի բայի։

1976 թվականի վերջերին բելգիացի հայազետ Միշել վան Էսթրուքը Մատենադարանի աշխատակիցներին տեղեկացրել էր, որ կենդի անվան զրազարանում նյութեր ուսումնասիրելու ժամանակ հանդիպել է հայերեն երկու ձևագիր պատմագիտության, որոնք իրենց շափերով հիշեցնում էին «Մշո ճառքներ»։

Այս հաղորդումը բնության անովեց Մատենադարանի անօրինության հերթական նիստում և բանի որ այդ եույն օրերին տողերիս դրող գործույզման պիտի գնար Մոսկվա, Մատենադարանի անօրեն պրոֆ. Խաչիկյանի հանձնարարությամբ պիտի բանակցություններ վարել կենդի անվան զրազարանի անօրեն պրոֆ. Սիկորսկու հետ, ո՞վ գիտի, թե ես համաձայնեին այդ մաղաղաթյա թերթերը հանձնել Մատենադարանին։

Մոսկվա հասնելուն պես եղա կենդանյան գրագրանի ձևագրական բաժնում։ Նշխարները բերվեցին սեզանի վրա։ Գրությունը, գրազաշտի չափսերը, սյունակները, 19-րդ դարում թերթերի վրա կատարված համարակալումները, երկրների հաջորդականությունը հաստատում էին վան Էսթրուքի

կասկածները, այդ երկու թերթերը Մշո մատչանի անբախտելի մասերն էին:

Այդ նույն օրը հանդիպեցի իմ լավ բարեկամ, որս գրող ու կինոսցենարիստ, Մատենադարանին նվիրված «Մուր» ու «Երթիվ» գրքի հեղինակ Կիմ Բազիշին, պատմեցի հայտնաբերված թերթերի մասին: Կիմը, որ հայ ձեռագրերի հետ կապված բոլոր հորցերը իր սրտին շատ մոտ է ընդունում, այս անգամ ևս ոգևորությունից ցնծում էր.

— Լո՛ւր, վաղեմ իսկ միասին դեմ էնք գրագրանի տնօրենի մոտ,— պատրաստահամարին առաջարկում է Կիմը,— չէ՞ որ ևս նրա հետ լավ ծանոթ եմ, կի՞ն շատեմ լավ բարեկամներ ենք: Ի վերջո ևս էլ, այսպես ասած, մի բիշ երախտիք ունեմ գրագրանի նկատմամբ. իմ սցենարով հասուկ ֆիլմ է նկարահանված Լեինիանցի գրագրանի մասին: Յս ևս կմիջնորդեմ: Տեսնենք ինչ կստացվի:

Բանակցությունները ընթացան առանց դուլզն ինչ բարդությունների: Գրագրանի գերեկտոր պրոֆ. Միկորսին ուշադիր լսեց մեր պատմածները: Հետաքրքրվեց Մատենադարանի առօրյա գործերով, ցավ հայտնեց, որ մեկ անգամ է միայն հնարավորություն ունեցել մեկ մոտ լինելու.

— Երկու կարծիք լինել չի կարող,— շարունակեց հարգելի պրոֆեսորը,— թերթերը պիտի վերագրանան իրենց մայր մատչանի գիրքը: Զափազանց ուրախ եմ, որ մեք հիշավորաց գրչագիրը պիտի վերագրանի իր կորցրած զավակներին: Դուք հանգիստ վերագրա՞՞՞ք Երևան, մեք հարցք կընենք մեկ մոտ, և վստահ է հղեք, որ ամեն ինչ զրական կլուծվի: Թերթերը մեր աշխատակիցների միջոցով կուղարկենք Երևան:

Հուլիսյան այդ օրը Մատենադարանի նիստերի զահլիճում սովետական ժողովուրդների բարեկամության մի նոր ու զեղչելի դրսևորման փաստն էր արձանագրվում. Լեինի անվան գրագրանի աշխատակիցները Ելնտինա Կուզբլևան ու Տամարա Գերենիան Մատչոցյան մատենադարանի գիտական խորհրդի արտակարգ նիստում ի կատար էին ածում ՍՄԶ խորհրդագրույն մշակութային կենտրոններից մեկի, Լեինիանց գրագրանի տնօրինության որոշումը և Մատենա-

դարանին էին հանձնում իրենց մոտ պահվող «Մշո ձագրնաբիք» նրկու մանրակարգված թերթերը (նկ. 5, 6): 100-ամյա բաժանումից հետո թերթերը իրենց սուրը գրավեցին մայր մատչանում:

## «ԱՄԵՆ ԲԱՆ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՊԻՏԻ ԸՆԵՆ»

Կեղո՛ւ, 1977. հայերեկ 29

Լոնդոն հասնելուց մի քանի օր հետո հանդիպեցի պարոն Հարութչյան Գայաճյանին: Մատենադարանում էինք ծանոթացել մոտ տասը տարի առաջ և լավ բարեկամներ էինք դարձել:

— Է՛, Լոնդոնի մեջ ու՞ր եղար:

— Դուք չգիտե՞ք մատենադարանցիին ձեք երկուսը առաջին հերթին ուր պիտի գնա: Բրիտանական թանգարան: Չէ՞ որ հայերեն ձեռագրերի ամենամեծ հավաքածուն Անգլիայում այդտեղ է գտնվում: Հավանաբար լսած պիտի լինեք, որ Բրիտանական թանգարանի գրքային ու ձեռագրական հարուստ հավաքածուների հիման վրա 1973 թ. մի նոր հաստատություն է ստեղծվել, որ կոչվում է Բրիտանական գրագրան: Ահա ուրեմն օրվա մեծ մասը այնտեղ եմ անցկացնում:

— Իսկ Վիկտորիա և Ալյեքսա թանգարան գաջի՞ր:

— Այ՛ն, մեկ ամբողջ օր շրջել եմ այդ թանգարանի արահներում:

— Է՛, մեկ անգամով թանգարան կըրես՞ս տեսնել: Հարկավ ժամանակդ սուղ է, բայց կուզեմ անգամ մ'ալ ինձի հետ երթա՞ս. բաներ մք բեզի ցույց պիտի տամ. որ ուրիշը չի կըրնար:

— Եման պատրաստակամությունից հետո ևս միայն կարող էի շնորհակալ լինել պ. Հարութչյանին, Լոնդոնի հնագույն հայ քննակիչներից մեկին, որ ընայած իր առաջացած տարիքին, լի էր ավյանով ու խինդով: Այսպիսի մարդիկ մեզ հայկական ձեռագրերի հոտերը որսնողներին, շատ օգտակար են: Տասնյակ տարիներ պարկերով միենույն վայրում, մոտ կանգնած լինելով հայ գաղութի կյանքին, միաժամանակ մեծ շփում ունենալով երկրի զոքոթարք շրջանների հետ, նրանք գիտեն իրենց միջավայրի ամեն մի անկյունը, անցու-

դարձը, ստորյան: Հարություն Գալաճյանը եղև է զորքի վաճառական: Ճիշտ է ներկայումս, ինչպես ինքն է ասում Գալաճյանը, բայց դա երևութապես է միայն, մեր մի քանի հանդիպումների ժամանակ համոզվեցի, որ նա շարունակում է աղբյի իր գործով, որը նա սիրում է արվեստագետի սիրով:

— Քարամ, ես չեմ ուզեր, բայց բարեկամներս հանդիսա չեն տար, երբեմն անանկ աղջիկ զորքի դիմառնելու համար կը կանչեն, որ կը ցավիմ երիտասարդ լրվալուս համար: Ես չեմ կանչում ամենևն յախելու տեսած եմ, հաճախ այ, ցավի սիրտ, ծախած եմ է, ի՞նչ պիտի ընեի, մեկ մարդ է՛մ, մեկ զուխ: Եղևենն վնը հովը փշեր հոս է ձգը զիս, թե չէ Անզիտ մեջ ի՞նչ գործ ունեի: Քալե՞, բալե՞ երթանք թանգարան: Անագործուն մասին հարց կը խոսինք:

Վիտորիա և Ալբերտ թանգարանում պարոն Հարությունը ինքն շատ ազատ էր զգում, տանտիրոջ պես զիտեր լուրաբանչյուր սրահ, ամենայն մանրամասնութիամբ ծանոթ էր ցուցանմուշների մեծ մասի պատմութիանը:

— Ես հոս հաճախ կու գամ: Եստ կը սիրեմ սա պատկերները, հնությունները, սա գործիչներն ու խալիները:

Երբում ենք թանգարանի սրահներում, հիանում հազար ու մի ցուցանմուշներով և ի վերջո հասնում զորգների հովա ու լալանքանկ սրահները, որտեղ կախված են մեծ ու փոքր բազմաթիվ գորգեր՝ պարսկական, հնդկական, կովկասյան, թուրքական:

— Հոս հայկական խալիներ այ կան, բայց որպես թուրքական կամ ընդհանրապես որպես կովկասյան կը ներկայացվին: Կը պատճառարանեն, թե Պարսի կամ կովկասի տարածքներուն վրա գտնվող բնակավայրերն են ձևը բերած: Եստ անգամներ եմ բողոքած, որիչներն այ ըսած են, բայց կոտավարիչները իրենց չգիտնալու կը զարնեն: Ուշադրություն բրն սա խալիներ. հարյուր մղոնն այ հայերն կը խոսի. սա զարգերն ու գույները, սա վիշապները միայն հայ վարպետը կը շինե: Անանկ խալիներ ժամանակ մը հոս շատ կալին, բայց հավաքած են: Քալե՞ ասոց, ուրիշ, ուրիշ քան այ պիտի տեսնես:

Պ. Գալաճյանը ակնհայտորեն շատ էր հուզված. վրդովմունքից հեռւմ էր Մոսկնում ենք մի ցուցապահարան:

— Կարգա՞, լավ կարգա՞՝ սա նեկապալա պիտեին անգլիերեն բացատրադիրը. «Պարսկական—Հայկական թվականութեան՝ 1719»: Է՛, բան մը կը հասկցվի՞: Զավալը (խեղճ) հայ վարպետը թե որ դիտար երկու-երեք հարյուր տարի նաք իրեն պիտի օտարցնեն, ձևեր կոտորի պիտի ու Մեալուպին գիրերով ափսեին վրա լպիտի դրոշմի հայկական թիվը՝ ՈճԿԻ (=1719): Ամո՞թ, ամոթ ասոց զիտութիամբ: Հունգարացի Գուրոշին անտր լսած կա՞ս. զինքը չեմ անշնար, բայց խորապես կը հարթեն: Է՛Ֆիբնի տգալ: Բուսապիշտին մեջ հայկական խալիներու ցուցահանգես կազմակերպած էր և զիրը այ հրատարակած էր: Ճշմարտութիամբ սրբանալ լրվար. որ մեր ուշ, որ մը կանոն երեան կ'ըլլե:

Մեկ շարքով հեռու նորից անգլիացի այ. Գալաճյանին. այս անգամ արգեն իր տանը: Նա միայնակ էր ապրում. ծամանակին բնտանիք չէր կաղնի և շատ էր ախտոտում զրա համար:

— Հանգուցյալ հայրս Կեսարիային մեջ կըսեր. ամեն բան ժամանակին պիտի ընես, այլապես հավեր պես ձեռքդ զորս կը թռչի: Ե՛րբ ձերպաց, ես այ չգիտցա: Ստիպված պատալ անգուցի սպասուհիս բնահանուրի պիտի ենթարկվիմ. երբ ուզե՞ կուգա, երբ ուզե՞ իր կար: Մի՛ ինչար, երբեմն այ, երբ կը հիվանդանա՞՝ ես ինչ կը սպասարկեմ: Զոր օրինակ այսօր բիշ մը պաղ տնե՞՝ կերակուրը ես եխած եմ. հավով փիլավ շինած եմ: Տեսեմ պիտի հավե՞նս:

Պ. Գալաճյանի տան հիմնական կահավորանքը սրտակարգ զեղեցիկ, շքեղ զորգերն ու կարպետներն էին:

— Խալիները պարսկական են: Դուն Պարսկաստան ապրած ես. Քաշանի խալիներ պիտի շատ տեսած ըլլաս: Ասոնք սիրեցի՞ր: Կարպետներ հայկական են: Աս մեկը հնագույնն է. 250—300 տարվա հնություն ունի. Ղարսի շրջանի գործ է: Ես թեղի կըսեմ, դուն ինձի հավատա՞՝ բացառիկ կարպետ է, գործվածքին ուշադրություն բրն, գույներուն, նախշերուն: Մի՛ որ Հայաստան պիտի բերեն, կըրնաս վտատ՞ ըլլալ:

Հիրավի, ես հավատում էր այ. Հարությունին: Նա շատ

անմիջական, շիտակ ու խոստովանազան՝ անձնագրորոշյուն է. մտտապարտքի առաջ եկավ Հայաստան, տեսավ մեր երկրի աննախագահ պիւրբն ու դարգացումը և խոստացավ իր ումերին ներածին լափ սատար լինել նրա մշակույթի ստաբիլացման, այցելել Պատմության Քանդաքան՝ նվիրել սանդղագործ հայկական գործվածքներ, այցելել նոր կազմակերպվող Հայկական Սովետական Հանրապետության խմբագրություն՝ Լոնդոնից ուղարկել Բրիտանական հանրագիտարանի վերջին հրատարակության բոլոր հատորները, այցելել Մասնենադարան՝ ուղարկել միլենարդան փաստաթղթեր, ուխտի գնաց էջմիածին՝ նվիրել ձեռագրեր: Նրա բարեգործությունների մասին պատմում էին նաև անգղիահայերը:

— Բարձր, թող Մասնենադարանը ինձն ձեռանա, որ ձեռագիրներս նվիրեցի էջմիածին Քանդաքանին: Նրկերով անգամ երբ թուրքաբներու հետ Հայաստան եկա, առաջին օրն իսկ գերբերը թևս տակ դրի, բար տանիմ Մասնենադարան: Ինթուրքաբնին աղչելի բուսվ մրտորամը փոխած են, պիտի երթանք էջմիածին: Գացինք էջմիածին, տեսա հոն ալ հին ձեռագիրներով կը հետաքրքրվին, բար՝ առնք ստեղծ նվիրեմ, հետը Մասնենադարանի համար ալ բան մը թերևս խորհիմ: Առանկ ալ եղավ. բանի մը տարի առաջ անորդին մեզ ձեռագիր մը գնեցի: Արքայն էի, որ խոստումս պիտի կատարեին է՛, բանի զուն Լոնդոն են, հարմար է հանձնեմ քեզի՝ ո՞վ զիտե՛ կըրնամ՝ նորեն գալ Հայաստան:

Խորին շնորհակալությունը ընդունում եմ պ. Հարություն Քալայանի այս նոր նվիրատվությունը և հետաքրքրությունը թերթում եմ գրազգիրը, որ 1623 թ. Ս. Ստեփաննոս Նախավայի վանքում բնորոշեցանկավ ժողովածու է: Ձեռագրի գրչուներն են Գրիգոր Կողոնացին (Կևսարացին) և ոմն Մանվել: Ժողովածուում ընդգրկված են Դովան Լոնդոն քարոզները, Գրիգոր Նարեկացու մի քանի տաղերն ու մեղեդիները, վարդան Ալեկեցու առակները: Ձեռագիրը լավ վիճակում էր և ուներ ընդարձակ հիշատակարան:

Պարոն Հարությունը անշաղի ուրախ էր, որ ձեռագրի գրչուներից մեկը զուգահեռաբանում իր հայրենակիցն է եղել: Ուրախ էր նաև անգլուհի սպասուհին, որը, ճիշտ է, ոչինչ չէր

հասկանում մեր հայերեն խոսակցությունից, բայց իմանալով, որ պարոն Հարությունը նվիրատվություն է անում, և զանրան մեծ բավականություն է պատճառում, ինքն էլ սրտանց հրճվում էր: Այս բոլորից հետո, պարզ է, մեծ բավականությունը պետք է վայելիներ պ. Հարությունի պատրաստած սփիլավը:

### ԱՅՆՈՐԵՆ ԶԵՆՈՎԻԳ ԳԱԿՍՏՈՆԻ ՀԱՎԱՔԱՆՈՅՈՒՄ

Հավարդե, 1977, դեկտեմբեր 2

Հավարդեն անունով քնակավայր Անգլիայի սովորական քարտեզների վրա զուր չեք գտնի, սակայն այն գոյություն ունի, գտնվում է Ուելզի կոմսությունում, Չեստեր քաղաքից ոչ շատ հեռու:

Հավարդենը մեզ համար գոյության իրավունք ստացավ այն օրից, երբ տեղեկացանք, որ 19-րդ դարի Անգլիայի նշանավոր պետական գործիչ Ուիլիամ Գլադստոնի հիմնադրած Սուրբ Դենիել գրադարանը գտնվում է այդ քնակավայրում: Գրադարանը գրադարան, բայց մեզ համար այն հետաքրքրություն էր ներկայացնում, որովհետև այնտեղ էր պահվում 1895 թ. Կովկասահայերի կողմից Գլադստոնին նվիրաբերված հայերեն գրադար մասույթը:

